

8 v
7-30

1908p.

2/405.

Ա. ՊՕԴՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ՖՕՆԴ

- 6 NOV 2011 4/9

85.
7-30

ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴՍՐԱՆ № 1

1007
34235



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ


Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԵԲՏՐԱԶԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ., 7.
1908

11 8 JUL 2013

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Ներկայ զբաղվելի մէջ ղեակեղաժ «Պատմաժքների» մե-
ժագոյն մասը Թարգմանական է: Ինքնուրոյն են զբաղվելի
վերջում ղեակեղաժ երկու նախափերջին պատմաժքները՝
«Հանի-Սօնան» և «Ծածանը», վերջրաժ կովկասեան ղի-
ստղութիւններից:



1. ԶՐԱՍՈՅՋՆ ՈՒ ԲՈՒԼՆՈՐԸ



ատ լաւ շներ էին Զրասոյգն ու
Բուլղոզը։ Նրանք թէ դո-
չադ, թէ համարձակ էին և
թէ միևնոյն ժամանակ
խիտ սիրալիր ու բարի։
Ցաւը միայն նրանումն էր,
որ նրանք իսկի չէին կա-
րողանում միմեանց հետ հաշտ ապրել։ Շէնց որ
նրանք միմեանց տեսնում էին հեռւից, իսկոյն,
կատաղածի նման, իրարու վրայ էին յարձակ-
ւում և միմեանց բուրդն էին գզում։

Մէկ անգամ այդ շները իրարու հանդիպե-
ցին ծովի եզերքին, նաւահանգստի մօտ, ուր նա-

ւերն ու շոգենաւերն են հանգստանում: Այդտեղ ծովեզերքի մայթը, որ մեծ-մեծ ու տաշած քարերից էր շինւած, շատ բարձր էր ջրի մակերևոյթից ու շատ մեծ երկարութիւն ունէր: Այդտեղ շները, իրարու վրայ յարձակելով, կատաղութիւնից իրանց գլուխը կորցրած, թաւալ-թաւալ էին լինում բարերի վրայ, և յանկարծ՝ շրրոճփ—երկուսն էլ ընկան ծովի աղի ալիքների մէջ:

Բուլդոգը լող էր տալիս, ինչպէս առհասարակ բոլոր շները, որչափ որ կարող էր: Իսկ Ջրասոյզը հրաշալի լողոր էր. նրա մատների միջև, սագի ու բազի նման, լողալու թաղանթներ կային, և նա մեծ ճարպիկութեամբ աշխատում էր թաթերով, գլուխը ջրի ալիքներից բարձր բռնած: Նոյնը չէր կարողանում անել հաստ ու անճոռնի Բուլդոգը. ամեն րոպէ նա կորչում էր վերեւից վազող ալիքների տակ, յուսահատական ջանքեր էր գործ գնում, որպէսզի չը խեղդւի, և շարունակ ֆրոտկացնում էր իր կարճիկ քթովը:

Ջրասոյզը արդէն շատ հեռու էր գնացել. նա վազուց արդէն լողալով հասել էր ծովեզերքին՝ այնպիսի մի տեղ, ուր այլևս մայթ չը կար ու ծովափը դաժն էր և աւազով ծածկւած: Նա այդտեղ դուրս եկաւ ծովից, թափ տւեց ջուրը իր սե ու զանգուռ մազերի վրայից և սկսեց

թաւալ-թաւալ անել աւազի վրայ: Բայց յանկարծ, նայելով ծովին, նա նկատեց իր թշնամուն, որը յուսահատական ճիգեր էր անում, որպէսզի դուրս գայ ջրից սալայատակած բարձր մայթի վրայ: Ի հարկէ, նա այդպիսով միայն իրան էր յոգնեցնում իգուր տեղը:

Արդեօք խրդճաց խեղճ Բուլդոգին Ջրասոյզը, թէ՞ նա պարզապէս չը կարողացաւ տեսնել, թէ ինչպէս մի կենդանի էակ թրպրտում էր ջրի մէջ. միայն թէ նա շտապով ջրի մէջ նետւեց և արագութեամբ լողաց դէպի իր խեղդուող հակառակորդը: Հասնելով Բուլդոգին, Ջրասոյզը բռնեց նրա վզկապից, բարձրացրեց նրա գլուխը և, այդպէս քաշելով, նրան ափը դուրս հանեց: Այդպիսով Բուլդոգը ազատւած էր մահից: Այդ ժամանակահանդիսից ալդ երկու շների միջև եղած հին թշնամութիւնը իսպառ վերացաւ: Նրանք մինչև իսկ շատ բարեկամացան, այնպէս որ, երբ մի բանի ժամանակից յետոյ Ջրասոյզը երկաթուղու տակը ընկաւ և մեռաւ, Բուլդոգը երկար ժամանակ տխուր էր և իր բարեկամի կարօտն էր քաշում:



2. ԿԱՏՈՒՆ ԵՒ ԴԵՂՁԱՆԻԿԸ



ի տիկին մի շատ սիրուն և լաւ վարժեցրած դեղձանիկ ունէր: Նրա վանդակի դռները միշտ բաց էին լինում, և նա թռչկոտում էր սեղանի վրայ ու զիւ ձայնով իր երգն էր կրկնւացնում:

Միենոյն տան մէջ մի կատու էլ կար, որը, ինչպէս և թռչնիկը, տանտիրուհու սիրելին էր: Կատուն ոչ միայն դեղձանիկին չէր դիպչում, այլ և մինչև իսկ երբէք նրա կողմն էլ աչք չէր դարձնում:

Բայց մի անգամ, երբ տիրուհին իր երեխաների հետ միասին նստած էր սեղանի շուրջը, կատուն յանկարծ յարձակեց թռչնիկի վրայ, բռնեց նրան ատամներով և, ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով նստողների բարձրացրած աղմուկի վրայ, տարաւ նրան սենեակի ամենամութ անկիւնը:

Նւ ինչ էք կարծում, բանից դուրս եկաւ,

որ սենեակն էր մտել մի օտար մեծ, մոխրագոյն կատու: Սա, նկատելով դեղձանիկին, աչքերը չռել էր նրա վրայ, կպել գետնից և արդէն պատրաստուում էր ցատկել ու յափշտակել անհոգ թռչնիկին, երբ տան կատուն, նկատելով այդ բանը, շտապել էր հեռացնել դեղձանիկին շար գիշատիչի ճանկերից:

Երեխաները դուրս վռնդեցին անկոչ հիւրին և նորից թռչնիկը առաջւան պէս սկսեց թռչել ու երգել սենեակում:

Դժւար չէ երևակայել, թէ դրանից յետոյ ինչպէս էին գովաբանում ու սիրում գեղեցիկ թռչնիկի կեանքը փրկողին:

3. ԿՈՎՆ ՈՒ ՉԱՐ ՏՂԱՆ

Մեծ ճանապարհի մօտ, ընդարձակ մարգագետնի վրայ, հանգիստ կերպով մի կով էր արածում: Մի ինչ որ չար տղայ վաղեց դէպի մարգագետինը և սկսեց բարեր նետել խեղճ անասունին:

Երկար տարաւ կովը այդ կոպիտ յարձակումները, բայց, վերջապէս, համբերութիւնը հատաւ. նա մօտեցաւ տղին, բարձրացրեց նրան իր կոտոշների վրայ, բռնելով նրա շորե-

րից, դուրս հանեց ճանապարհը և, զգուշութեամբ վայր դնելով վախեցած չարաճրճուն, ինքը հանգիստ կերպով նորից վերադարձաւ արածելու:

4. ԽՍՍՈՂ ԹՈՒԹԱԿԸ

Վերջերս ինձ մի հանաքչի թուխակի մասին էին պատմում, որին, ինչպէս ասում էին,



բոլոր ծանօթ երեխաները սիրում էին: Երբ նա լաւ էր արամազրւած լինում, բարձր ձայնով

ծիծաղում էր, և այնպէս լաւ էր ծիծաղում, որ բոլոր նրան լսողները նոյնպէս ակամայից ծիծաղում էին: Ծիծաղելով հանդերձ թուխակը պարզ կերպով արտասանում էր. «Բաւական է ինձ ծիծաղեցնէք: Հաւատա, որ հս ծիծաղից կը մեռնեմ»: Եւ նա սկսում էր աւելի բարձր բրբրջալ:

Բայց նա միեւնոյն ժամանակ շատ լաւ կարողանում էր և լաց լինել ու հեկեկալ, և երբ նրան հարցնում էին. «Ի՞նչ է բեզ պատահել, խեղճ պօպկա», նա պատասխանում էր. «Վատ եմ զգում ինձ, շատ վատ եմ. բոլորովին մըսել եմ», ու, ճիշտ և ճիշտ երեխայի նման, հեկեկում էր: Յետոյ նա ծանր ախ էր քաշում ու յանկարծ ուրախացած կանչում էր. «Լաւ եմ, հիմա ինձ լաւ եմ զգում», և ծիծաղից թուլանում էր:

Մի տիկին, որ հիւր էր եկել այն ընտանիքի մօտ, ուր թուխակն էր ապրում, խօսում էր նրանց ազախնի հետ, որի անունը Մաշա էր: Այդ միջոցին յանկարծ հարևան սենեակից ձայն է լսւում. «Մաշա, Մաշա, այստեղ եկէք, ես ինձ վատ եմ զգում»: Հիւրը հարցնում է, թէ արդեօք հիւանդ երեխան է ի՞ր մօտ կանչում ազախնին, բայց սա պատասխանում է. «Ոչ, դա մեր թուխակն է: Նա միշտ այդպիսի օյիններ է հանում, երբ լսում է իմ ձայնը. իսկ

երբ ես նրա սենեակն եմ մտնում, նա ծիծաղում է»:

Եթէ մէկը հագում կամ փռշտում է, թու-
թակը անպատճառ ասում է. «Բոլորովին մրսել
է»: Իսկ երբ մի անգամ աղախինը բարկացաւ
նրա վրայ և սպառնաց ծեծել, նա արտասանեց.
«Այ, չես կարողանայ ծեծել»:

Կատուին տեսնելով, թութակը բարձր ձայ-
նով կանչում էր նրան. «Փիսօ, փիսօ» իսկ յե-
տոյ նրա տեղակ էլ պատասխանում էր. «Մեա՛ն,
մեա՛ն»: Եթէ ուրիշն էր կատուին կանչում, նա
միայն ասում էր. «Մեա՛ն, մեա՛ն»:

Այդ թութակը շան նման հաջել էլ գիտէր,
և մի անգամ իր հաջոցով այնպէս զրգոեց փոք-
րիկ շնիկին, որ սա քիչ մնաց նրա վրայ յար-
ձակէր:

Բայց ամենից գարձալին այն էր, երբ նա
սկսում էր հաւերի ու աքաղաղների հետ խօ-
սել, լուսամուտից նրանց նկատած ժամանակ:
Մէկ տեսնում էիր, որ նա կըրկչում է, առանց
շունչ առնելու, և մէկ էլ յանկարծ գլխի փում-
փուլը տընկում էր, թե երբ չըսում ու բարձր
ձայնով կանչում. ծնւ-դրու-դնւ:

Եթէ նրա վանդակին մի անձանօթ մարդ
է մօտենում, նա երկար նայում է նրան լուռ
և ապա՝ ասում է. «Բարեւ ձեզ»:



5. ՇՈՒՆԸ ԵՒ ԴՐԱՍԸ

Րկու ձիաւոր քաղաքից տուն
էին վերադառնում: Նրանցից
մէկը իր հետ մի շուն ունէր և
իր ընկերակցին գովասանքներ
էր անում շան մասին: Նա ասում
էր. «Ինչ որ ես մոռանամ ճանա-
պարհին կամ կորցնեմ, իմ Ներօ
շունը կարող է գտնել, որչափ էլ հեռու լինի
իմ կորցրած բանը. բաւական է միայն, որ ես
նրան նշան անեմ, թէ գնա, գտիր»:

Որպէսզի փաստով ապացուցանի իր ասա-
ծը, նա իր շանը մի արծաթէ տաս կոպէկանոց
ցոյց տւեց և դրեց մի մեծ բարի տակ, որ ընկած
էր ճանապարհին: Յետոյ ձիաւորները շարու-
նակեցին իրանց ճանապարհը: Երեք վերստի
չափ անցնելուց յետոյ, տէրը նշան արեց
շանը և սա շտապով յետ դարձաւ ու սլացաւ
ճանապարհով:

Անցաւ մի-երկու ժամ. ձիաւորները ար-
դէն տուն էին հասել, բայց շունը դեռ չէր վե-
րադառնում: Գիշերը վրայ հասաւ, բայց ոչ որ
չէր իմանում, թէ ինչ էր պատահել Ներօյին:

Իսկ Ներօյին ահա թէ ինչ էր պատահել.
խելօք շունը շատ ճշտութեամբ կատարեց իր

տիրոջ հրամանը: Նա գտաւ քարը, որի տակ տաս կոպէկանոցն էր պահւած, և ամբողջ ուժով աշխատում էր նրան տեղից շարժել: Բայց քարը չափազանց ծանր էր նրա համար: Այդ ժամանակ Ներօն սկսեց քարի տակը փոս փորել, որպէսզի այդպիսով փողին հասնի:

Այդ միջոցին ճանապարհով մի պարոն էր անցնում: Նա ուզեց իմանալ, թէ ի՞նչ էր անում շունը. ձիուց ցած իջաւ, քարը մի կողմ քաշեց և, նրա տակ տաս կոպէկանոցը տեսնելով, իր զրպանը դրեց, բոլորովին չը մտածելով, թէ շունը հէնց այդ տաս կոպէկանոցն էր փնտռում:

Խեղճ Ներօ: Ի՞նչ էր այժմ նրան մնում անել: Նա վազեց գնաց այդ պարոնի յետևից, նրա հետ մտաւ նրա տունը և սուս ու փուս պառկեց սեղանի տակ ու մնաց մինչև որ պարոնը ընթրիք էր անում: Յետոյ այդ պարոնի հետ նա գնաց ննջարանը և այդտեղ թաղնւեց մահճակալի տակ: Ներօն թանկագին և գեղեցիկ շուն էր, այդ պատճառով էլ տան տէրը շատ ուրախ էր, որ նա իրանից չէր հեռանում:

Սենեակում շոգ լինելու պատճառով, նա պատուհանը բացեց և սկսեց հանել: Վրայի բաճկոնը հանելով, նա կախեց մեխից:

Այդ ժամանակ Ներօն, որը մահճակալի տակից հետևում էր պարոնի բոլոր շարժումներին, յանկարծ դուրս թռաւ իր թագուստի տեղից,

ատամներով բռնեց բաճկոնը, պոկեց մեխից, դուրս ցատկեց լուսամուտից ու անհետացաւ գիշերւան խաւարի մէջ, իր հետ տանելով և պարոնի բաճկոնը:

Առաւօտեայ ժամը 4-ին նա արդէն իր տիրոջ մօտ էր: Բաճկոնի զրպանում գտնւեց տաս կոպէկանոցը, բայց բացի դրանից, այնտեղ ուրիշ փողեր էլ կային և մի հատ էլ ժամացոյց: Այս վերջին իրերի համար Ներօյի տէրը յայտարարութիւն տպեց, և երբ նրանց տէրը եկաւ ու պատմեց, թէ ինչ էր արել Ներօն, բոլորն էլ սկսեցին զովել ու սիրել խելօք շանը և զարմանում էին նրա հնարագիտութեան վրայ:

6. ԿԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԹԻ ՍԵՐԸ

Աղախինը, սեղանը հաւաքած ժամանակ, մոռացել էր կաթնամանը վերցնելու, իսկ կաթնամանի մէջ սեր կար:

Կատուն սենեակումն էր: Նա սաստիկ ուզում էր սերն ուտել, բայց չը գիտէր ինչպէս անել: Ի հարկէ, սեղանի վրայ թռչելը զրեւար չէր նրա համար, բայց ցաւը նրանումն է, որ կաթնամանը փարչի ձև ունէր և բերանն

էլ այնպէս նեղ էր, որ գլուխը ոչ մի կերպ չէր մտնի նրա մէջ, իսկ ամանը վայր զցել և սերը թափել նա փսոսում էր:

«Ի՞նչպէս անել», մտածում էր կատուն:

Յանկարծ նա ուրախութիւնից թռչկոտաց, կար-

ծես թէ արդէն

ճարը գտել էր: Յետոյ

նա ցատկեց աթոռի

վրայ, աթոռից էլ սե-

ղանի վրայ, յետ դար-

ձաւ դռանը նայեց,

հոտ բաշեց սերով

փարչից և մտածեց.

«Գլուխս փարչի մէջ

չի մտնի, բայց չէ՞ որ

ես թաթիկներ ու-

նեմ». և ահա նրա թաւշեայ առաջին թաթիկ-
ներից մէկը կամացուկ ս'երի մէջ է մտնում,
յետոյ դուրս հանւում, լրպրստւում և նորից
փարչի մէջ մտնում:

Մի տաս ըոպէից յետոյ, երբ աղախինը յի-
շեց սերի մասին ու եկաւ տանելու, կաթնա-
մանը արդէն դատարկ էր, իսկ կատուն էլ՝ սե-
ղանի տակը նստած՝ սերի վերջին կաթիլներն էր
լիզում իր թաթի վրայից:



7. ԱՐՁՆ ՈՒ ԵՐԵՒԱՆ

Դուրսը սաստիկ սառնամանիք էր: Մի
աղբատ երեխայ անցնում էր մեծ քաղաքի փո-
ղոցով և ցրտից սառչում: Ո՞ւր գնար խեղ-
ճը: Նա հայր ու մայր չունէր, իսկ օտարները
նրան տուն չէին թողնում: Նա տեսնում էր,
թէ ինչպէս փայլուն լոյս էր երևում այն տնե-
րի պատուհաններից, որոնց մօտով ինքը անց-
նում էր, թէ ինչպէս այնտեղ երեխաները խաղում
ու ծիծաղում էին. նա խնդրում էր, որ իրան
էլ ներս թողնեն, գոնէ տաքանալու համար,
բայց ոչ որ չէր կամենում պատսպարել նրան:

Այդ ժամանակ նա մի գոմ նկատեց, որի
դռները կողպած չէին: Երեխան մտաւ գոմը,
որպէսզի սառը բամուց պատսպարւի, իսկ գո-
մում մի արջ էր կապւած շղթայով: Արջը զըր-
կեց նրան իր թաթերով և սեղմեց իր բրդոտ
կրծքին: Այդպէս նրանք անցկացրին ամբողջ
գիշերը: Երեխան տաքացաւ արջի զրկում և
քնեց: Առաւօտեան երեխան ազատւեց արջի
զրկից և գնաց քաղաք ողորմութիւն խնդրելու:
Երեկոյին նա նորից վերադարձաւ արջի մօտ,
և նրանք նորից քնեցին միասին, զրկախառնւած:

Այդպէս շարունակեց մի քանի օր: Բարի

արջը շուտով նկատեց, որ երեխան քաղցած է մնում և սկսեց իրան համար բերլած կերակուրից նրա համար բաժին պահել:

Մէկ անգամ արջի համար երկար ժամանակ ուտելու ոչինչ չը բերին, այնպէս որ թէ արջը և թէ երեխան բնեցին քաղցած: Այդ ժամանակ գոմը եկաւ ծառան, արջի համար ուտելիքը ձեռքին: Նա խիստ զարմացաւ, տեսնելով, որ արջը բոլորովին չէ շարժւում, գրկում բռնած բնած մանուկին: Այդ մասին ծառան գնաց իր տիրոջը յայտնեց: Տէրը, կանչելով հարկաններին, եկաւ տեսնելու, և բոլորն էլ զարմացան:

Երբ երեխան զարթնեց, լաց եղաւ, իմանալով, որ իրա թագստեան տեղը իմացւել է: Արջը իր թաթը նրա գլխին էր քսում, փաղաքշում էր և նրան էր առաջարկում երեկւան ընթրիքից մնացած մնացորդը: Այդ տեսարանը դիտողները չը գիտէին ինչ խօսել զարմանքից, իսկ տէրը այնպէս զգացւեց խեղճ երեխայի վիճակից, որ նրան վերցրեց իր մօտ կըրթելու:

8. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՋՆ ՈՒ ԻՐ ՁԱԳՈՒԿՆԵՐԸ

Հիւսիսային ծովը հետազոտելու համար ուղարկւած նաւը ընկել էր սառույցների մէջ և ստիպւած էր եղել ձմեռը այդ անհիւրընկալ բնութեան մէջ անցկացնել: Չորս կողմը ամբողջապէս ձիւն և սառցային ահագին լեռներ էին: Տխրում էին խեղճնաւաստիները, չիմանալով ինչով զբաղւել այդպիսի անմարդաբնակ ամայութեան մէջ: Մէկ անգամ նրանք մի ծովաշուն սպանեցին, կրակ վառեցին և սկսեցին նրան խորովել:



Սպիտակ արջը, մօի հոտն առնելով, եկաւ իր բոթոթների հետ գէպի կրակը: Նաւաստիները, նաւի վրայից նկատելով արջերին, մօի կտորներ էին գցում նրանց, իսկ մայր-արջը շտապով հաւաքում էր մօի կտորները և իր ձագուկներին էր տանում:

Իսկ երբ նա եկաւ մօի վերջին կտորը տանելու, նաւաստիները հրացաններից կրակեցին

և սպանեցին երկու քոթոթներին էլ, ծանր վիրաւորելով միւսնոյն ժամանակ և նրանց մօրը:

Պէտք էր տեսնել, թէ որպիսի սրտառու յուսահատութեամբ մայրը վրայ ընկաւ իր՝ շունչը փչող ձագուկների վրայ, գրկում էր նրանց իր թաթերով, սեղմում էր իր մարմինն, աշխատելով բարձրացնել նրանց ու տանել:

Իսկ երբ տեսաւ, որ իր բոլոր ջանքերը իզուր են և որ ձագուկները արդէն սառել են, խեղճ մայրը մի կողմ քաշեց, երեսը դէպի նաւը դարձրեց և սկսեց այնպիսի ողբալի ու տխուր ձայնով ոռնալ, որ կարծես թէ յանդիմանում էր այդ քարասիրտ մարդկանցը, իր սիրելի երեխաներին սպանելու համար: Այդ ողբի պատասխանը հրացանի մի նոր պայթիւն եղաւ. մայր-արջը թաւալեց գետին և մեռաւ, հազիւ հազ շարժւող լեզուով իր ձագուկների վէրքերը լիզելով:

9. ԲՐԻՆՁԻ ԳՈՂԵՐԸ

Հալլէ նաւահանգստի մօտ, Յէյլօն կղզու վրայ, մի քանի զինւորներ պահապան էին կանգ-

նել բրինձով լիքը ամբարի մօտ, որպէսզի ոչ ոք բրինձը չը գողանայ: Մէկ անգամ այնպէս պատահեց, որ զինւորները ստիպւած էին գնալ ապստամբած հնդկներին պատժելու, իսկ ամբարի մօտ միայն երկու զինւոր մնացին: Հագիւ էին զինւորները հեռացել ու աչքից կորել, երբ վայրի փղերի մի ամբողջ հօտ երևաց, որոնց մի քանի ժամանակից ի վեր նկատել էին շրջակայքում: Հօտի առջևից գնում էր մի ծանօթ փիղ, որին առաջուց էլ տեսել էին, և որը, երևի, գալիս էր հետախուզութիւններ կատարելու, որովհետեւ հէնց որ նա վերադարձաւ իր ընկերների մօտ, ամբողջ հօտը արագութեամբ ամբարին մօտեցաւ, կարծես թէ գիտէին, որ վտանգ չը կայ: Փղերի մօտենալուն պէս, ամբարի մօտ թողնւած զինւորները շտապեցին ծառի վրայ բարձրանալ ու թագնւել նրա խիտ տերևների մէջ, այնպէս որ նրանց չէր կարելի տեսնել, իսկ իրանք կարող էին փղերի բոլոր շարժումները նկատել:

Ամբարի պատերը քարից էին, շատ հաստ և շատ պինդ: Միակ անգքը, որտեղից կարելի էր ամբարը մտնել, կտուրիցն էր շինւած, իսկ կրտուրը կարելի էր միմիայն սանդուխտներով բարձրանալ: Փղերը սկսեցին պատռ քանդել: Ամենածեր փիղը, որ ահագին ժանիքներ ունէր, մօտեցաւ պատին և սկսեց իր աւերիչ աշխա-

տանքը: Բայց շուտով նա յոգնեց և յետ քաշեց: Այդ ժամանակ մօտեցաւ միւս փիղը, որ իր մեծութիւնով երկրորդ տեղն էր բռնում, և շարունակեց սկսած գործը: Նրանից յետոյ մօտեցաւ երրորդը, որին յաջողեց, վերջապէս, իր սոսկալի երկու քլունգներով պատի մէջ մի ծակ բանալ: Հէնց որ սկզբի ծակը բացւած էր, բոլոր փիղերը միասին սկսեցին աշխատել, և շուտով պատի մէջ մի այնպիսի անցք բացւեց, որ փիղը ազատ կերպով կարող էր ներս մտնել: Յետոյ խելօք կենդանիները խմբերի բաժանւեցին, ամեն մի խումբը երեք կամ չորս հոգուց բաղկացած, և մինչ մի խումբը ամբարը մտած աւերմունքի գործն էր կատարում, միւս փիղերը ամենայն համբերութեամբ իրանց հերթին էին սպասում: Այդպէս շարունակւեց, մինչև որ ամբողջ հօտը, որ քսան փղից էր բաղկացած, կերաւ ու կշտացաւ:

Այդ ժամանակ փղերից մէկը իրանց սովորական նշանի ճիշդ արձակեց: Հեռու բլուրի վրայ վերադարձող զինւորներն էին երևում, և փղերի ամբողջ հօտը շտապով դէպի անտառը գնաց: Զինւորները, ամբարին հասնելով, տեսան, որ բրինձի մեծ մասը ոչնչացրել են այդ գողերը: Իսկ փղերը արդէն հեռու էին. իրանց կրնձիթները այս ու այն կողմը շարժելով, նրանք արդէն իրանց հայրենի կուսական անտառն էին

մտնում, և նրանց յետևից արձակւած հրացանի մի քանի գնդակները նրանց ոչ մի վնաս չը հասցրին:

10. ԿԱՏՈՒՆ ԵՒ ՇԱՆ ԶԱԳՈՒԿՆԵՐԸ

Մէջ շատ սիրուն ու փոքրիկ սպանական շնիկ հինգ հատ ձագուկներ ունէր: Նրա համար շատ դժուար էր այդ բոլորին կերակրել ու կրթել: Իսկ նրանց դուրս նետելն էլ ափսոսում էր տիրոջին, որովհետև այդ շնիկը շատ թանկագին տեսակիցն էր: Տիրուհին իր խոհարարին խնդրեց, որ սա շան ձագուկներին ծծակով կերակրէ ու խոհանոցում վառարանի մօտ պահէ, որ չը մրսեն: Խոհարարը պատասխանեց, որ այդ օրը կատուն էլ է ձագուկներ բերել և որ կարելի է շան ձագուկներից երկուսը կատուի տակը դնել, նրա ձագուկների փոխարէն: Այդպէս էլ արեցին: Վատուն շատ սիրով ընդունեց շան ձագուկներին, անշուշտ, չը հասկանալով, որ դրանք իրանը չեն: Խոհարարը հետզհետէ կատուի բոլոր ձագերը գողացաւ, թողնելով նրան միմիայն շնիկի երկու ձագուկները: Հետաքրքիրն այն է, որ կատուի մօտ սնւող շան ձագուկները շատ շուտով մեծացան:

Երկու շաբաթից յետոյ նրանք արդէն այնպէս կայտառ էին, ինչպէս որ կարող էին լինել կատուի ձագերը. նրանք արդէն լաւ ման էին գալիս, հաջում էին և շարունակ այս ու այն կողմ էին ցատկոտում, մինչդեռ միւս ձագուկները, որոնք իրանց մօր մօտ էին մնացել, օրւայ մեծ մասը կուչ եկած պառկում էին, աչքերը ապու-



շի նման այս ու այն կողմ էին դարձնում և միշտ կազկանձում էին: Իսկ կատուն լաւ դայեակ լինելու բոլոր յատկութիւններն ունէր: Դեռ շատ փոքր հասակից նա շան ձագուկներին գործունէութեան սովորեցրեց, իսկ նրանց գուարճացնելու և շարժումների վարժենելու համար, նա իր պոչն էր տալիս խաղալու և ինքն էլ նրանց հետ

այնպէս էր կենդանանում, կարծես ինքն էլ մի փոքրիկ կատու լինէր: Կարճ ժամանակից յետոյ այդ ձագուկները կարողանում էին արդէն միս ուտել ու փխօյլ կաթին այլևս կարիք չունէին: Շուտով ժամանակը հասաւ նրանց կատուից բաժանելու: Երբ նրանց բարի փխօյլից հեռացրին, փխօն ոչ մի կերպ չէր կարողանում այդ դժբաղդութեան հետ հաշտուել: Գլուխը մռայլ կերպով ցած թողած, կատուն ման էր գալիս տան մէջ և պատահմամբ, իր ցաւալի կորուստն ունենալուց մի օր յետոյ, նա նկատեց սպանական շնիկին, որը իր մնացած երեք ձագուկներին էր խնամում: «Այ թէ ով է գողացել իմ զաւակներին», — մտածեց կատուն և նրա աչքերը փայլատակեցին: — «Ձէ, դու իմ ձեռքիցը այդպէս հեշտ չես պրծնի. այդ ձագուկներից երկուսը իմն են»: Այստեղ երկու վիրաւորւած մայրերն այլևս չը համբերեցին: Նրանք իրարու վրայ յարձակեցին և սոսկալի կռիւ սկսեց: Յաղթութիւնը կատուի կողմը մնաց, որը շան ձագուկներից մէկին իր ատամների մէջ առաւ և կատարեալ յաղթանակով վազեց ու նրան իր օթեանը տարաւ:

Ձագուկին ապահով տեղ թողնելով, նա վերադարձաւ միւս ձագուկին էլ տանելու. նորից պատերազմեց, յաղթեց և շնիկից երկրորդ ձագուկին էլ խլեց: Դրանից յետոյ շնիկն ու կատուն հաշտեցին. կատուն չէր ցանկանում եր-

բորդ ձագուկին էլ խլել, շատ լաւ յիշելով, որ
իրանից միայն երկուսն էին գողացել:

11. ԿԱՏՈՒՆ ՈՒ ԶԱՆԳԱԿԸ



Տաւսիական մի վանքում սովորութիւն էր ճաշի հրաւիրելու համար զանգահարել: Այդ վանքում ապրող կատուն այնպէս սովորել էր զանգի ձայնին, որ ամեն անգամ, հէնց որ զանգահարում էին, իսկոյն սեղանատուն էր գալիս և այնտեղ իր համար բաժին ստանում:

Մի անգամ այնպէս պատահեց, որ այն սենեակի դուռը, ուր կատուն էր գտնւում, կողպել էին, և կատուն ոչ մի կերպ չը կարողացաւ գնալ ճաշողների մօտ, թէև իրան այնչափ հաճելի զանգի ձայնը արդէն լսել էր:

Ճաշից արդէն մի քանի ժամ էր անցել, երբ քաղցած կատուն յաջողեց իր բանտարկութիւնից ազատուել:

Նա իսկի էլ չէր ցանկանում այդ օրը առանց ճաշի մնալ, և ահա թէ նա ինչ հնարեց:

Թաթերով ամուր բռնելով զանգակի թուկից, նա սկսեց իր ամբողջ ոյժով զանգահարել, էնթադրելով անշուշտ, թէ այդ զանգահարութիւնից յետոյ վարդապետներն անպատճառ պիտի սկսեն ճաշել:

Այդպէս անժամանակ զանգահարութիւնը լսելով, վարդապետները շտապեցին իմանալ, թէ բանը ինչո՞ւն է: Եւ որչափ մեծ էր նրանց զարմանքը, երբ տեսան, որ զանգահարողը իրանց կատունն էր:

12. ՀԱԽԱՏԱՐԻՄ ԲՈՒԼՊՈԳԸ

Անգլիացի Հենրի Լի մի մեծ և ուժեղ բուլդոգ ունէր: Մի անգամ, ուշ երեկոյին, Հենրի Լի, իր իտալացի ծառայի հետ ննջարան մտնելիս, նկատեց, որ բուլդոգն էլ է ուզում իր յետևից ներս մտնել: Այդ շանը շատ էլ չէին սիրում և նրան աւելի բազումն էին պահում, քան թէ ննջարան ներս թողնում: Բայց այս անգամ նա այնպէս խիստ կերպով սկսեց դուռը չանգոդել ու ոռնալ, որ տէրը ստիպւած

եղաւ ներս թողնել: Ներս մտնելով, բուլղոգը ամենայն հանգստութեամբ գնաց պառկեց ման-
ճակալի տակը, կարծես թէ որոշած լինէր, որ
ինչ էլ լինի, գիշերը այդտեղ պիտի անց-
կացնի:

Ի՞նչ կարելի էր անել: Անզլիացին, չը կա-
մենալով աղմուկ բարձրացնել, շանը հանգիստ
թողեց, իսկ ինքը հանւեց, ծառային դուրս ու-
ղարկեց և ճրագը հանգցրեց:

Բաւական ժամանակ անցած, երբ տան մէջ
արդէն բոլորը քնել էին, մէկը անզլիացու նըն-
ջարանի դուռը բացեց և զգուշութեամբ ներս
մտաւ: Մի ակնթարթում բուլղոգը դուրս թը-
ռաւ մանճակալի տակից և ատամները խրեց
եկւորի մարմնի մէջ: Վախեցած Հենրի Լի-ն շտա-
պով զանգահարում է, ճրագ է վառում, և ի՞նչ:
Նա տեսնում է իր խտալացի ծառային, որին
շունը կատաղի մոնչիւնով այնպէս ամուր դէմ
էր տւել պատին, որ նա անկարող էր տեղից
շարժւել:


Յետոյ այդ ծառան խոստովանեց, որ ինքը
մտադիր էր սպանել և կողոպտել հարուստ Հենրի
Լիին և, անշուշտ, նա այդ կանէր, եթէ միայն
մոռացած չը լինէր, թէ շունը մնացել էր նըն-
ջարանում:

Մինչև հիմա էլ Հենրի Լի տոհմի ընտանե-
կան նկարների շարքում պահւում է այդ լորդի

մի մեծ պատկերը, որտեղ նա նկարւած է իր
բուլղոգի հետ: Շան պատկերի տակ գրւած է.
«Աւելի հաւատարիմ, քան սիրւած»:

13. ՇՈՒՆՆ ՈՒ ՁԻՆ

Նիւֆաունդլենդեան մեծ շունն ու ձին
շատ մօտիկ բարեկամներ էին: Երբ ուզում էին



ձիու վրայ թամբ
դնել, շունը նըս-
տում էր նրա
մօտ, դուռն չը
թաթերի վրայ
դնում և սիրով
նայում իր բա-
րեկամին: Հէնց որ
թամբը դրւած
վերջացած էր,
ինչպէս որ հարկն
է, շունը բռնում

էր ձիու սանձից և դուրս քաշում բակը, ուր
տէրը սպասում էր նրան: Յետոյ նա գնում էր
ձին հեծած տիրոջ յետևից ու, երբ նրանք բո-
լորը միասին տուն էին վերադառնում, շունը

նորից բռնում էր ատամներով սանձը և իր բարեկամին ախոռն էր տանում: Եթէ ձիապանը այնտեղ չէր լինում, նա հաջում էր այնչափ, մինչև որ ձիապանը գալիս էր և ձիուն իր տեղը կապում:

14. ԱԹԽԱՏՈՂ ՁԻԵՐՆ ՈՒ ՍԱՌՈՅՑԸ

Երկու աշխատող ձիեր ուզում էին ջուր խմել, բայց լճակը արդէն սառել էր և նրանք իզուր էին փորձում իրանց սմբակներով սառույցը կտրել: Այդ ժամանակ նրանք, մտածելով որ երկու ձիու ոյժն աւելի մեծ է, բան թէ մէկինը, միասին կողք-կողքի կանգնեցին և երկուսն էլ միաժամանակ սկսեցին ոտները բարձրացնել ու միասին սառույցին խփել: Այդպէս միացած ոյժերով, նրանք իսկ որ իրանց նպատակին հասան. սառույցը կտրւեց, և ձիերը յագեցրին իրանց ծարաւը:

15. ՄԵԾԱՅՈԳԻ ԱՌԻԻԾԸ


Վիէննայի մի գաղանանոցում պատերազմ էր նշանակւած առիւծի ու շների միջև:

Գաղանների թագաւորի վանդակի մէջ չորս հատ մեծ բուլդոկներ ներս թողին: Նրանցից երեքը վախեցան, պոչերը ծալեցին և յետ-յետ քաշւեցին: Միայն մէկ շունը համարձակութիւն ունեցաւ առիւծի վրայ յարձակել: Բայց առիւծը իսկի տեղիցն էլ չը շարժւեց, թաթի մէկ հարւածով շանը գետին փռեց, քաշեց իրան մօտեցրեց և իր առաջին երկու թաթերը նրա վրայ դրեց:

Հանդիսականները կարծում էին, թէ շունը արդէն սպանւած է: Բայց մի քիչ յետոյ նա սկսեց շարժւել, աշխատելով զօրաւոր թաթերի տակից դուրս պրծնել: Առիւծը վեհանձնութեամբ բաց թողեց նրան: Շունը արդէն վանդակի դռան մօտ էր և ուզում էր դուրս թռչել, բայց առիւծը յանկարծ զղջաց, որ որսին ձեռքից բաց է թողել և նա մի ոստոյնով շանը մօտեցաւ: Շունը վախից կպաւ գետնին: Առիւծը կանգնեց ու մտածմունքի մէջ ընկաւ: Ինչպէս երևում էր, նա խղճաց վախեցած ու անպաշտպան կենդանուն, ու թոյլ տւեց շանը դուրս թռչել բաց դռնակից: Հանդիսականները, տեսնելով առիւծի այդ վարմունքը, գովասանական աղաղակներ արձակեցին:

16. ՁԻՆ ԵՒ ԶՐՅԱՆ ՄԵՔԵՆԱՆ

Պարոն Բ. մի ձի ունէր, որը մի տար-
օրինակ խելքի տէր էր: Երբ տէրը տանը չէր
լինում, իսկ նա կամենում էր ջուր խմել,



մօտենում էր ջրհորին, ատամներով բռնում էր
ջրհան մեքենայի կոթը և սկսում էր վեր ու
վար շարժել: Այդպիսով ջուրը լցւում էր տա-
կառի մէջ և ձին յագեցնով իր ծարաւը,
նորից վերադառնում էր ախոռը:

17. ՀԱՒԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄԸ

Պօնդիշերի քաղաքում անգլիական մի
զինւոր իր բաժին օդուց միշտ մասն էր հանում մի
լաւ վարժեցրած փղի համար: Այդ պատճառով էլ
փիղն ու զինւորը իրար հետ խիստ բարեկամա-
ցել էին: Մէկ անգամ սովորականից աւելի շատ
օդի խմած լինելով, զինւորը վախենում էր իր
մեծաւորի աչքին երևալ. նա պառկեց փղի առա-
ջին թաթերի մէջտեղը և այնտեղ էլ քնեց խո-
րը բնով:

Փղի տէրն ու մեծաւորի ուղարկած զին-
ւորները իզուր էին աշխատում բնած զինւո-
րին իր պառկած տեղից վերկացնել:

Փիղը ոչ ոքի մօտ չէր թողնում, բոլոր մօ-
տեցողներին էլ սպառնալով իր կնճիթով:

Միւս առաւօտը զինւորը զարթեց և սար-
սափով տեսաւ, որ իր գլխի վերևում, սարի պէս,
իր բարեկամի ահագին մարմինն է ցցւած: Իսկ
բարեկամը իր կնճիթով նրան փաղաքշում էր
և ամեն կերպ աշխատում իր բարեկամական
գգացումներն արտայայտել: Երբ զինւորը հե-
ռացաւ նրանից և անհետացաւ գօրանոցնե-
րում, այն ժամանակ փիղը առաջւան պէս թոյլ

տւեց իր տիրոջը մօտենալու իրան և տանելու, ուր որ ցանկանում էր. նա դարձեալ առաջ-
ւան հեզ և խոնարհ փեղն էր:

18. ՇՆԵՐՆ ՈՒ ՄԿՆԵՐԸ

Շների սիրահար մի պարոն իր բոլոր շներին կերակրում էր մի երկար տաշտի մէջ, որից նրա բոլոր սիրելիներն ուտում էին միաժամանակ. առանց մէկը միւսին խանգարելու: Մէկ անգամ շնանոց մտնելով այնպիսի ժամանակ, երբ շները ճաշում էին, նա դարմանքով տեսաւ, որ ահագին քանակութեամբ մկներ ամենայն հանգստութեամբ շների հետ միասին կաթնափրթոշ էին անուշ անում: Շների տէրը միտածեց այդ բոլոր մկներին էլ միանգամից ոչնչացնել: Միւս օրը նա շներին դուրս հանեց շնանոցից, իսկ տաշտի մէջ կերակուր լըցրեց ու թողեց այնտեղ: Միևնոյն ժամանակ նա դռան ճեղքից հրացանը այնպէս ուղղեց, որ մէկ հարձածով կարելի էր կոտորակով բոլոր մրկներին սպանել: Եւ ի՞նչ էք կարծում: Որչափ էլ սպասեց այդ պարոնը իր թշնամիներին, բայց նրանցից և ոչ մէկը չը մօտեցաւ տաշտին: Ծեր մկներից մի բանիսը զուլխները հանեցին իրանց

բնից, բայց զգալով, որ մի ինչ որ վատ բանի հոտ է գալիս, իսկոյն պահեցին նորից: Մօտ մի ժամ զուր տեղը սպասելով, պարոնը նորից ներս թողեց շներին, և հէնց որ սրանք մենակ մնացին ու սկսեցին ուտել՝ մկները նորից հաւաքւեցին իրանց ճաշը անուշ անելու: Այդ կենդանիները հասկանում էին, որ իրանք կարող են ապահով լինել միմիայն շների ներկայութեամբ:

19. Ե Ր Ա Խ Տ Ա Գ Է Տ Պ Ո Ի Մ Ա *)

Պարագլայի Բուէնօս-Այրէս քաղաքում, Դօն-Դիէզօ դը-Մինգօգայի կառավարութեան ժամանակ, սաստիկ սով էր: Դիէզօն, վախեցալով որ սոված հնդիկները, իրանց համար ուտելու բան փնտռելիս, չը սկսեն սպանացիներին պատկանող արտերը մտնել, հրաման արձակեց, որ ոչ ոք չը համարձակուի այդ արտերի կողմը գնալ, իսկ գնացողը մահաւան պատժի կենթարկուի: Արտերի վրայ էլ պահապաններ էին դրւած, որ ցորենը չը գողանան: Այնուամենայնիւ մի կին, Մարգօնատա անունով, յաջո-

*) Պումս վագրի մի տեսակն է:

դեց պահապանների աչքիցը սպրդել և արտերի մէջ մտաւ։ Աշխատելով պահապանների հսկողութիւնից զերծ մնալ, Մալգօնատան որոշեց քարայրներում ապաստան գտնել։ Բայց հէնց որ նա մտաւ քարայրը, իսկոյն սոսկումով նըկատեց, որ այնտեղ մի պումա էր պառկած։ Սակայն նրա սարսափը իզուր էր. պուման հի-



ւանդ էր և հազիւ էր կարողանում ոտները շարժել։

Մալգօնատան սկսեց խնամել զազանին և ամեն կերպ աշխատում էր նրա տանջանքները թեթևացնել։

Մի քանի ժամանակից յետոյ հիւանդ կենդանին բոլորովին առողջացաւ, և այդ օրւանից

նա խիստ բարեկամացաւ իր բարերարի հետ։ Երբ պուման վերադառնում էր որսից, նա իր աւարի մի մասը Մալգօնատային էր բերում, որն այդ պատճառով էլ իրան շատ լաւ էր ըզգում քարայրում։ Բայց դա երկար չը շարունակւեց։ Խեղճ կինը սպանացիների ձեռքն ընկաւ, որոնք նրան տարան իրանց մեծաւորի մօտ։ Մեղադրելով այն բանի մէջ, որ նա քաղաքից հեռացել էր հակառակ եղած հրամանի, Մալգօնատային շատ խիստ պատժի դատապարտեցին. նրան անտառում ծառից կապեցին և թողեցին, որ կամ քաղցից մեռնի, կամ թէ վայրի գազաններից զիջատւի։ Սակայն, երկու օրից յետոյ, երբ զինւորներն եկան նայելու, թէ ինչ է պատահել այդ կնոջը, նրանք զարմանքով տեսան, որ նա կենդանի ու անփնաս է մնացել, և որ նրա ոտների տակ մի պումա է պառկած։ Զինւորներին նկատելով, պուման մի կողմ քաշւեց. բայց, երբ տեսաւ, որ ուզում են կնոջը տանել, նա կրկին մօտեցաւ և սկսեց փաղաքշել նրան, կարծես թէ կամենում էր դրանով ցոյց տալ, թէ որչափ ծանր է նրանից բաժանւելը։ Զինւորները Մալգօնատային դարձեալ հրամանատարի մօտ բերին, բայց այս անգամ բոլորն էլ խնդրում էին ազատ արձակել այդպիսի հրաշքով փրկւած Մալգօնատային։ Եւ նրան ներումն շնորհեցին։

20. ՇՈՒՆՆ ՈՒ ԱՂԶԻԿԸ



ի օր Գերմանիայում մի հարուստ անտառապետ արուզաւակ ունեցաւ, և երջանիկ հայրն իր հարեան բոլոր ծանօթներին կնուների հրաւրեց: Հրաւիրւածներէ մէկը, նոյնպէս անտառապետ, հիւր գնալու միջոցին, չընկատեց, որ իր ջրասոյզ շունը՝ Ֆլինկն էլ վազում էր կառքի յետեւից: Տեղ հասնելով և նկատելով շանը, նա շատ դժգոհ մնաց ու փրնթփրնթում էր, թէ ի՞նչ ուշանը չէ թողել տանը: Բայց նա շատ էլ չանհանգստացաւ, որովհետեւ Ֆլինկը շատ լաւ վարժեցրած շուն էր և ոչ մի կերպ չէր կարող ոչ իր տիրոջը և ոչ էլ ուրիշներին նեղութիւն պատճառել: Նա թիակներէ ու բահերի տակն իր համար մի անկիւն գտաւ և պառկեց այնտեղ՝ դարմանի վրայ:

Երբ բոլորը գնում էին եկեղեցի, շունն էլ ուզեց իր տիրոջը հետեւել, բայց երբ տէրը հրա-

մայեց տեղից չը շարժւել, շունը նորից պառկեց իր տեղում:

Կնուների արարողութիւնը վերջացաւ. հիւրերը վերադարձան ու սեղանի նստեցին: Նոր էին սկսել համեղ կերակուրներն ուտել, երբ սենեակը ներս վազեց մի փոքրիկ աղջիկ, հարեանի աղջիկը, սաստիկ վախեցած ու մազերը գլգլաւորած, և աղաղակեց. «Բարի պարոն անտառապետ, օգնեցէք ինձ, բոյս շունն ընկաւ»: Բոլոր հիւրերն իրանց տեղերից վեր թռան և վազեցին դէպի հարեան խոր լճակը: Ֆլինկը տեսնելով, որ իր տէրը իջաւ սանդուխտից, և մտածելով, թէ նա տուն է գնում, նոյնպէս վեր կացաւ իր տեղից և գնաց նրա յետեւից: Բոլոր ներկայ եղողները սարսափով նայում էին այն տեղը, ուր վեց տարեկան աղջիկը պատերազմում էր մահւան դէմ: Բոլորն էլ աղաղակում, այս ու այն կողմն էին վազում, բայց չը գտնւեց մէկը, որ երեսային օգնութեան հասնէր,—այնպէս որ բոլորն էլ գլուխները կորցրել էին: Երեսային ազատելու համար, վազեցին ձող բերելու, իսկ այդ ժամանակ անկոչ հիւր Ֆլինկը, աչքերը յառած, նայում էր խեղդող աղջկայ կապոյտ զգեստին, որ այդ միջոցին էլ մի անգամ ջրի երեսն էր դուրս եկել:

Ֆլինկի տէրը, նկատելով շան լարւած ու-

շաղրութիւնը, բոլորովին ջրի եզերքին մօտեցաւ և, ձեռքով ցոյց տալով աղջկայ վրայ, բարձր ձայնով գոչեց իր սովորական որսորդական հրամանը. «Պիլ, ապօրտ». (բռնիր, բեր): Երկու համարձակ ոստիւնով Ֆլինկը նետուեց ջրի մէջ և զարմանալի արագութեամբ լողաց դէպի այն կողմը, ուր խեղդւողի հագուստն էր նկատուել: Երբ շունն արդէն մօտիկ էր գտնուում, աղջիկը նորից երևաց ջրի երեսին: Շունը բռնեց նրան հագուստից և մեծ ջանքերով դէպի ափը քաշեց: Այդտեղ ամենից առաջ շանը դիմաւորեց տան տէրը, որը շտապեց օգնութեան հասնել նրան և զրկեց խեղճ աղջկանը: Սրան տալիս իր ծնողների տունը, սկսեցին ուշքի բերել ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով, և մի քառորդ ժամից յետոյ երեխան կենդանացաւ: Ընդհանուրի ուրախութեանը վերջ չը կար: Դեռ այն ժամանակ, երբ շունը նետուեց ջրի մէջ, բոլորն էլ աղաղակում էին. «Ա՛խ Աստուած, երանի թէ կարողանայ աղջկանը դուրս բերել»: Իսկ այժմ, երբ աղջիկն ուշքի եկաւ, Ֆլինկը օրւայ հերոսը գարձաւ. նրան այլ ևս չը թողեցին բահերի ու թիակների տակը մտնել, այլ սեղանի մօտ տեղ տւին ու բոլորն էլ սկսեցին փաղաքշել և կերակրել նրան ամենահամեղ պատառներով: Բոլորն էլ հետաքրքրեցին այդ շան պատմութիւնն իմանալու, և նրա

տէրը ստիպւած եղաւ մի քանի անգամ պատմել հիւրերին այդ ազնիւ կենդանու ամբողջ կեանքի մասին:

21. ՎԱՅՐԻ ԱՅԾԸ

Մի գիւղացի կին անցնում էր խիտ անտառի մէջ եղած նեղ շաւղով: Մէկ էլ նա տեսաւ, որ մի վայրի այժ գուրս թռաւ անտառի խորքից, կանգնեց, նայեց իր վրայ և նորից մացառների մէջ մտաւ: Սկզբում գեղջկուհին փոքր ինչ վախեցաւ, բայց շատ շուտով հանգըստացաւ, նկատելով, որ այժն իսկի չի էլ մըտածում իրան մի վատ բան անել: Մի քանի անգամ այժը դուրս թռաւ շաւղի վրայ և նորից անհետացաւ, կարծես թէ հրաւիրում էր կնոջն իր յետևից գնալ:

Վերջապէս կինն ուզեց իմանալ, թէ բանն ինչու՞մն է և զնաց այժի յետևից: Նա ստիպւած էր շատ երկար գնալ խիտ անտառով, մինչև որ վերջապէս այժը կանգ առաւ մի շատ խոր վհի եզերքին, որի խորքում մի վտակ էր անցնում: Այնտեղ, ջրի մէջ, անօգնական վիճակում, մի փոքրիկ այժ էր պառկած և, որչափ

աշխատում էր, չէր կարողանում վհից դուրս գալ: Բարի կինը ցած իջաւ, գնաց նրան օգնելու, իսկ մեծ այծը, վհի եզերքին կանգնած, աչքերով հետևում էր նրան: Երբ այծեմնիկը դուրս հանւեց, նա իսկոյն զուարթացաւ ու վազեց իր մօր յետեից, և նրանք անհետացան խիտ անտառի խորքում:

22. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԲԱԴԵՐԸ


Վայրի բադերը լողում էին մի ամայի լճի ջրի երեսին, իսկ աղուէսը, լճի ափին թագնւած, մտածում էր, թէ արդեօք ի՞նչ միջոցով այդ բադերից մէկին անուշ անի: Եւ ահա նա վերցնում է մի խուրձ խոտ ու ջրի մէջ է գրցում այնպէս, որ խուրձը տեսնեն բադերը:

Նկատելով, որ թռչունները բոլորովին չը վախեցան, անհանգիստ չեղան, աղուէսը վերցրեց մի այլ խուրձ խոտ իր առամների մէջ և սկսեց կամացուկ դէպի բադերը լողալ: Նա այնպէս էր սուզուել ջրի մէջ, որ միմիայն գնչիկն էր երևում: Բադերը, չը նկատելով թշնամուն, առաջւան պէս շարունակում էին հանգիստ կերպով լողալ, և աղուէսի խորամանկութիւնը

հասկացան այն ժամանակ միայն, երբ իրանց ընկերներից մէկն արդէն նրա բերանումն էր:

23. Խ Ե Լ Օ Ք Փ Ի Ղ Ը

Փղին յաճախ էր պատահում անցնել մի կամուրջով, որ գցւած էր խոր ձորի վրայով:



Բայց ահա մէկ անգամ նա կանգ առաւ կամուրջի առաջ ու չուզեց անցնել, չը հայելով որ տէրն ամեն կերպ աշխատում էր նրան

բշել: Նա բզում էր փղին երկաթէ սուր ձողով,
խփում էր կնճիթին, բղաւում էր: Վերջապէս
փիղը շարժւեց և գնաց կամուրջով, բայց հէնց
որ նա կամուրջի մէջտեղը հասաւ, կամուրջը
խորտակեց և փիղն ու իր տէրը գլորւեցին ձորի
մէջ:

Մարդը ջախջախեց ու մեռաւ, իսկ փիղը
ծանր վէրքեր ստացաւ:

24. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՈՉԽՍՐԸ

Սկովզիացին մի ոչխար գնեց և նրան տա-
րաւ, մօտ հարիւր վերստ հեռաւորութեան վրայ
գտնւող, իր բնակավայրը: Այդ նոր տեղում ոչ-
խարը բաւական երկար ապրեց. նա մինչև իսկ
մի գառնուկ ծնեց ու մեծացրեց: Բայց
մէկ անգամ նա յանկարծ սկսեց իր հայրենի
այն դաշտերի կարօտը զգալ, ուր իր մանկու-
թիւնն էր անցկացրել, և մտածեց հայրենիք
վերադառնալ:

Իր կեանքում այդ ոչխարը միայն մէկ ան-
գամ էր անցել այն ճանապարհով, որով նա
հիմա հայրենիք պիտի վերադառնար: Բայց նա
չէր վհատւում և համարձակ առաջ էր գնում,
իսկ գառնուկն էլ յետևից վազում էր: Երբ գառ-

նուկը յոգնում էր ու կանգ առնում, մայրը
փաղաքշական մայունով նրան խրախուսում էր
և նրանք շարունակում էին իրանց ճանա-
պարհը:

Ճանապարհին մի քաղաք պատահեց, որի
մէջ տօնավաճառ կար: Ոչխարը կարծես թէ
հասկանալով, որ իր համար վտանգաւոր է այդ-
պիսի ժամանակ գառնուկի հետ քաղաքի փո-
ղոցներով անցնելը, պառկեց մացառների
մէջ ու մնաց այնտեղ ամբողջ երեկոն ու
գիշերը, իսկ առաւօտուայ ծէգին անցաւ քա-
ղաքի միջով:

Ոչխարը զգուշութեամբ իր շուրջն էր նա-
յում, վախենալով թէ մի գուցէ շները յարձակ-
ւեն իրանց վրայ: Զաստափի մօտ քիչ մնաց, որ
նրան բռնէին, կարծելով, թէ տէրը, երևի, փրնտ-
ուում է իր կորած ոչխարին ու կը գայ նրա յե-
տևից:

Բայց մեր ճանապարհորդները կարողացան
փախչել, և 9 օրւան ճանապարհորդութիւնից
յետոյ՝ ոչխարը վերադարձաւ հայրենիք: Նրա
նախկին տէրը շատ զարմացաւ և ուրախա-
ցաւ, երբ իմացաւ, թէ ինչպէս է վերադարձել
իր ոչխարը, ու սիրով վերադարձրեց այն փողը,
որ նրան վճարել էին այդ ոչխարը գնելիս:

25. ԿԱՊԻԿՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՆԱՑԻՆ



Աղիկս բաղաբուժ մի ջորե-
պան որոշեց իր արհեստը
թողնել և վաճառականու-
թեամբ պարապել: Իր ու-
նեցած բոլոր փողերով նա
կարմիր ֆէսեր գնեց և
այդ ապրանքով գնաց Ափ-
րիկէ, մտածելով, որ արաքներն ու թիւրքերը
մեծ ուրախութեամբ կ'առնեն այդ ապրանքը,
իբրև իրանց գլխի չալմայի զարդ:

Հասնելով Ափրիկէ, մեր վաճառականը՝
միայնակ, առանց ուղեկցի և ընկերի, սկսեց
բաղդ որոնել անծանօթ երկրում: Մէկ անգամ,
արեգակի ծէգից առաջ վեր կենալով, նա քմ-
բողջ առաւօտը քայլեց մի անմարդաբնակ վայ-
րով և մի խիտ ու սուերաւոր անտառի հա-
սաւ:

Շոգը սկսեց. սպանացին սաստիկ յոգնել
էր. նա պառկեց մի ծառի ստերի տակ, ջուա-

լի միջից հանեց իր ֆէսերից մէկը, դրեց գլու-
խին ու խորը քուն մտաւ:

Բայց որչափ մեծ էր նրա յուսահատու-
թիւնը, երբ նա քնից զարթնելով, նկատեց, որ
իրան շրջապատող ծառերի բոլոր ճիւղերի վրայ
իր կարմիր ֆէսերն էին փայլվում:

Կապիկները, որոնց սպանացին առաջ իսկի
չէր էլ նկատել, ուշադրութեամբ հետեւել էին
նրա բոլոր շարժումներին և, հէնց որ նա քնել
էր, իսկոյն արել էին նոյնը, ինչ որ արել էր
նա քնելուց առաջ, այսինքն՝ հանել էին ջուա-
լից ֆէսերը և դրել իրանց գլխին:

Բարկացած և յուսահատւած սպանացին
վերցրեց իր գլխից ֆէսը ու մի կողմ շարտեց:
Կապիկներն էլ, նրա օրինակին հետեւելով, նոյն
բանն արեցին, և խեղճ սպանացու ուրախու-
թեանը սահման չը կար, երբ նրան յաջողեց վեր-
ջապէս հաւաքել իր ապրանքը և նորից ջուալի
մէջ պահել:

26. ԳԹԱՌԱՏ ՓԻՂԸ

Հնդկաստանում սոսկալի սով էր: Դէպի
Թագաւորական պալատը տանող մեծ ճանա-
պարհի վրայ, քաղցից թուլացած ու մեռնող, մեծ

քանակութեամբ մարդիկ էին միշտ պառկո-
տում: Երբ թագաւորն իր փղի վրայ նստած անց-
նում էր այդ ճանապարհով, նա ոչ մի ուշադր-
ութիւն չէր դարձնում այդ դժբաղդների վրայ
ու բոլորովին հոգ էլ չէր տանում, որ, գոնէ
նրանց հաւաքէին ճանապարհի վրայից: Նրա
փիղը սուելի շատ էր խղճում ու զթում խեղճ
ժողովրդին. ոմանց նա կնճիթով բարձրացնում
ու զգուշութեամբ տեղափոխում էր ճանապար-
հի մէջտեղից, իսկ ոմանց վրայից էլ այնպիսի
զգուշութեամբ էր անցնում, որ նրանցից և ոչ
մէկին չէր դիպցնում իր ծանր ոտը, որպէս զի
նրանց աւելորդ տանջանք չը պատճառի:

27. ԽԵՂԴԻԵԼՈՒՅ ԱԶԱՏԻԱԾ ԹՈՒԹԱԿԸ

Անգլիական Հենրիխ Եօթներորդ թագա-
ւորի թուրքալը Ուխտամիխիստրեան պալատի
պատուհանից ընկաւ թեմզա գետի մէջ: Զուրն
ընկնելով, թուրքալը յանկարծ մի նախա-
դասութիւն յիշեց, որ լսել էր մի անգամ, և
բացականչեց. «Մակոյկ, երկու հարիւր մանէթ
մի մակոյկի համար»:

Ա. փին մօտ գտնուող մի նաւավար վրայ հա-

տաւ, ազատեց նրան, պալատ տարաւ և պատ-
մեց, թէ ինչքան էր խոստացել թուրքալը՝ իր
կեանքը ազատելու համար: Զարմացած պալա-
տականները փորձեցին հարցնել թուրքալին, թէ
նրբան տալ արդեօք նսւլաստուն: «Տաս կոպէկ
տւէք այդ խարդախին», հմտութեամբ պատաս-
խանեց թուրքալը:

28. ՀՈՎԻԻ ՇՈՒՆՆ ՈՒ ԵՐԵՒԱՆ

Հովիւը գնաց լեռները, ուր նրա հօտն էր
արածում: Նա հետը վերցրեց և իր երեք տա-
րեկան երեխային, որպէս զի նրան փոքր հասա-
կից սովորեցնի՝ համարձակութեամբ նայել մայ-
րենի լեռների վայրի ժայռերին, կատաղի հե-
ղեղատներին և անյատակ անդունդներին: Մեծ
ու հաւատարիմ շունն էլ նրա հետ էր:

Հովիւը նկատելով, որ հօտից մի ոչխար
է պակասել, երեխային նստեցրեց կանաչ
մամուռի փափուկ խալով վրայ, նրա մօտ թո-
ղեց շանը, իսկ ինքը գնաց ոչխարին փնտռելու:

Այդ միջոցին իրտ ամպերը հաւաքեցին
լեռների վրայ և բոլորովին ծածկեցին նրանց:
Մեր հովիւը յանկարծ անթափանցելի մառա-

խուղի մէջ զգաց իրան: Այդպիսի մի ժամանակ շատ վտանգաւոր է լեռների վրայ ման գալը, որովհետեւ, շուրջը մի քայլ հեռաւորութեան վրայ անգամ ոչինչ չը տեսնելով, մարդ ամեն ընդէ կարող է անդունդի մէջ ընկնել: Հովիւը խաբիսափելով էր առաջ գնում վտան-



գաւոր դար ու փոսերի միջով, յուսալով թէ նորից մի կերպ կը գտնի իր թողած երեխային: սակայն նա շուտով նկատեց, որ ինքը բոլորովին կորցրել է ճանապարհը: Մի քանի ժամ շարունակ նա թափառում էր այս ու այն կողմ, բայց իզուր. գիշերը վրայ հասաւ, նախքան նա

կարողացաւ իր երեխայի մօտ վերադառնալ: Առաւօտեան միայն նա կարողացաւ նկատել, որ ինքը մի ծանօթ հովիտ էր դուրս եկել, որտեղից հեռու չէր և իր տունը:

Երբ հովիւը տուն վերադարձաւ, կնոջին իմացաւ, որ իրանց որդին չէ վերադարձել: Նրա մօտ թողնւած շունն էլ չէր վերադարձել: Ծնողները սարսափի ու կսկիծի մէջ ընկան, մտածելով, թէ խեղճ երեխան կամ անդունդն է գլորւել և կամ հեղեղատի մէջ խեղդւել: Սակայն, այդպիսի մառախլապատ ժամանակ, գնալ երեխային փնտռել՝ անհնարին էր:

Միւս օրը հովիւը հաւաքեց իր բոլոր ազգականներին ու ծանօթներին և գնացին միասին երեխային փնտռելու: Նրանք բոլոր շրջակայ լեռները ման եկան, բզաւեցին, կանչեցին երեխային, բայց չը կարողացան նրան գտնել: Այդպէս շարունակեց երկու օր: Վերջապէս հովիւի կինը յայտնեց ամուսնուն, որ կորած շունը տուն էր վերադարձել և, մի կտոր կարկանդակ ստանալով, նորից շտապով փախել՝ գրնացել էր: Հովիւը, որ շատ լաւ էր ճանաչում, թէ ինչպիսի խելօք և հաւատարիմ կենդանի է իր շունը, վճռեց սպասել, թէ չի՞ գայ առդիօք դարձեալ շունը: Երեկոյեան նա, յիշաւ որ, նորից եկաւ, մի կտոր հաց ստացաւ և իսկոյն

հացը բերնին յետ փախաւ: Հովիւը հետեւեց նրան: Հասնելով այն տեղին, ուր լեռնային հեղեղատը, կարկաչիւն ջրվէժի փոխելով, թափւում էր ժայռից, նա տեսաւ, որ շունը քարերով շրջապատւած մի նեղ անցքի մէջ մտաւ: Խոտն ու մացառները բոլորովին ծածկում էին այդ անցքը, և հովիւը մեծ դժւարութեամբ կարողացաւ նրա մէջ մտնել: Չորս ոտների վրայ փորսող տալով, նա հետևում էր շանը, և այդպիսով մի մութ քարայրի մէջ ընկաւ, որն իր աղոտ լոյսը ստանում էր մուտքի կողմից հազիւ թափանցող արևի ճառագայթներից: Հէնց այդտեղ էր երեխան, որին արդէն կորած էին համարում: Նա սպասութեամբ ուտում էր շան բերած հացը, իսկ նրա այդ հաւատարիմ բարեկամն ու պահապանը՝ նայում էր երեխայի աչքերի մէջ, փաղաքշանքով շարժում պոչը և սպասում, թէ գուցէ իրան էլ մի քանի փշրանք բաժին ընկնի, իբրև վարձատրութիւն իր անձնանւիրութեանը:

29. ՎԱԳՐՆ ՈՒ ԳՈՄԵՃՆԵՐԸ


Աթ տարեկան տղան գոմէշների հօտն էր արածացնում անտառում: Յանկարծ անտառի խորքից դուրս թռաւ վագրը, բռնեց երեխային

և քարշ տւեց անտառի խորքը: Խեղճ տղի յուսահատական ճիչերից վրայ հասան գոմէշները, և նրանցից մէկը յարձակւեց վագրի վրայ: Կատաղի զազանը ստիպւած էր թողնել գոհն ու իր անձի պաշտպանութեան մասին մտածել: Նա արդէն ուզում էր գոմշի ոտքից բռնել, երբ սա մի այնպիսի վէրք հասցրեց նրան իր կոտորչերով, որ վագրը ստիպւած էր փախչել: Իսկ այդ միջոցին մի ուրիշ գոմէշ կանգնել էր տղէ մօտ ու պահպանում էր նրան, որպէս զի վագրն երկրորդ անգամ չը յարձակւի նրա վրայ: Տղան խիստ վիրաւորւած էր, բայց և այնպէս նրան շուրջապահին. այժմ նա ողջ և առողջ է ու խիստ նւերւած իր հօտին:

30. ԿՈՅՐ ՄՈՒԿԸ

Մի անգլիացի, նաւով ճանապարհորդելու ժամանակ, երբ պառկած էր գիշերը իր փոքրիկ սենեակում, տխրութիւնն ու թախիժը ցրելու համար, սկսեց զիտել, թէ ինչ են անում մրկները, որոնցով լիքն էր նաւը: Սկզբում մկներից մէկն եկաւ, ուշադրութեամբ նայեց չորս կողմը և նորից յատակի տակ մտաւ: Փոքր ինչ յետոյ այդ նոյն մուկը նորից եկաւ, իր հետ

ականջից բռնած քաշելով մի ուրիշ մուկ, որին
և թողեց յատակի ճեղքից ոչ հեռու: Բիշ յետոյ
դարձեալ երկու մկներ եկան և առաջինի հետ
միասին սկսեցին յատակի վրայի հացի փշրանք-
ները հաւաքել: Իրանց հաւաքած բոլոր փշրանք-
ները նրանք տալիս էին այն մկանը, որը ճեղ-
քի մօտ էր թողւած: Սա, ինչպէս երևում էր,
կոյր էր և այդ պատճառով էլ բոլորովին տեղից
չէր շարժւում, այլ ազահութեամբ ուտում էր
այն բոլորը, ինչ որ նրան տալիս էին բարի մըկ-
ները: Գուցէ, այս վերջինները նրա ձագերն էին,
որոնք հոգ էին տանում իրանց կոյր մօր մասին
իբրև երախտագիտութիւն այն բանի, որ սա է
մի ժամանակ նրանց էր կերակրել, երբ փոքր
էին:




31. ՎԱՐԺԵՑՐԱԾ ԾՈՎԱՅՈՐԹԸ

Մէկ իրլանդացի շատ բարի ու վարժեց-
րած մի ծովահորթ ունէր: Այդ իրլանդացի
ապրում էր ծովի ափին, մի շատ յետ ընկած
տեղ, և շրջապատւած էր չափազանց տղէտ ու
կոպիտ ժողովրդով: Պատահեց, որ սով եղաւ
ժողովուրդն ենթադրեց, թէ անբերրիութեամբ
պատճառն այդ ծովահորթն է, և պահանջեց, որ

նրան սպանեն: Բայց ծովահորթի տէրը չը հա-
մաձայնեց: Այդ ժամանակ խեղճ ու անմեղ
կենդանուն մի նաւակի մէջ դրին և, նաւա-
կը բաւականին հեռացնելով ափից, նրան ծովը
նետեցին: Սակայն ծովահորթը նորից վերա-
դարձաւ իր տիրոջ մօտ:

Այս անգամ վճռեցին նրան աւելի հեռու
բռնել: Ճանապարհին նաւաստիները հանեցին
խեղճ կենդանու աչքերը և, ջրի մէջ նետելով,



ասում էին. «Հիմա նա այլևս ճանապարհը չի
գտնի, որ վերադառնայ»:

Եւ յիրաւի, երկար ժամանակ նրան ոչ ոք
այլևս չէր տեսնում: Բայց մէկ անգամ, մի շատ
մուկ գիշեր, երբ սոսկալի կերպով փոթորկում
էր ովկեանոսը, իրլանդացին լսեց, որ բացի
քամու ոռնոցից ու շաշիւնից, իր դռան մօտ
մի ինչ որ ուրիշ աղեկտուր հառաչներ էլ են
լսւում: Նա բացեց դուռը—և տեսաւ ծովա-
հորթին:

Խեղճ կենդանին այնպէս էր տանջւել, իր տիրոջ և բարեկամի տունը փնտռելով, միևնոյն ժամանակ չը կարողանալով ոչինչ տեսնել շուրջը, և այն էլ փոթորիկ ժամանակ, որ շունչը փչել էր հէնց նրա շէմքի մօտ: Այդպէս ապացուցեց ծովահորթն իր հաւատարմութիւնը՝ դէպի իրան պահպանող ու վարժեցնող մարդը:

ՅԷ. ԱՆԱՋԱԿԻ ՁԻՆ

Անցեալ դարի կիսերում, մի սկովզիացի փաստաբան յաճախ Լօնդօն էր գնում գործերով: Այն ժամանակներում սովորաբար ձիով էին գնում, և փաստաբանը միշտ իր մեկնելուց առաջ մի ձի էր առնում, իսկ յետոյ ծախում նրան: Մէկ անգամ, Սկովզիա վերադառնալով, նա տօնավաճառում մի շատ լաւ ձի առաւ և բաւականին էժան վճարեց, իսկ միւս առաւօտը նա արդէն ճանապարհ էր ընկել: Ձին շատ լաւ էր գնում, և փաստաբանը խիստ գոհ էր իր կատարած առևտուրից: Բայց ահա նա անցնում է մի ամայի ու խուլ ընկած տեղով, ուր ճանապարհն երկար ժամանակ զառ ու վայրերով է գնում: Նա տեսնում է, որ հակառակ

կողմից դէմ հանդիման մի քահանայ է գալիս, փոքրիկ սայլի վրայ նստած: Ճանապարհի շուրջը այդ երկու ճանապարհորդներից զատ այլևս և ոչ մի մարդ չէր երևում: Փաստաբանի ձին, փոխանակ իր ճանապարհը շարունակելու, յանկարծ մօտենում է քահանային և կանգնեցնում նրան, կարծես թէ հաւատացած լինելով, որ իր տէրը կօգտւի յարմար առիթից ու կը կողոպտէ քահանային: Քահանան այնպէս վախեցաւ, որ իսկոյն հանեց իր բոլոր փողերը և ուղեց կարծեցեալ աւագակին տալ, աղաչելով միայն, որ իրան չը սպանի: Ի հարկէ, փաստաբանը շտապեց իր ձիու գլուխը շուռ տալ, պատմեց քահանային խնդրի էութիւնը և անշափ ներողութիւն խնդրեց նրանից: Յետոյ նա շարունակեց իր ճանապարհը: Սակայն հազիւ մի վերստ անցած, նրան մի կառք պատահեց, և չարաճճի ձին այդ կառքն էլ կանգնեցրեց: Այս անգամ, կառքում նստած պարոնը հանեց ատրճանակը և ուզում էր կրակել: Խեղճ փաստաբանը հազիւ հազ կարողացաւ մահից ազատուել:

Այդպիսի արկածներ շարունակ կրկնուում էին ամբողջ ճանապարհին, այնպէս որ փաստաբանը անիծում էր և՛ իր ճանապարհորդութիւնը և՛ գնած ձին: Մօտակայ քաղաքը հասնելով, նա ծախեց ձին չնչին գնով և, շատ աւելի թանգ վճարելով, մի բոնձուտ ձի առաւ:

Նա շատ ուրախ էր, որ վերջապէս ազատուել էր աւազակաբարոյ ձիուց, որի պատճառով իր գլխին շատ աւելի մեծ փորձանք կարող էր գալ, քան այն, ինչ որ արդէն եղել էր:

33. ՇՈՒՆՆ ՈՒ ՋՆԴԿԱՅԱԻՐ

Մի յայտնի ամերիկացի բնագէտ, Օդիւ-բօն անունով, իր բազում մի մեծ հնդկահաւ ունէր: Այս հնդկահաւն այնպէս ընտանի էր դարձել, որ իսկոյն վազում էր ամեն մէկի յետեից, ով նրան կը կանչէր, իսկ Օդիւբօնի հետ նա շատ լաւ բարեկամ էր:

Սակայն, երբ հնդկահաւն երկու տարեկան դարձաւ, նա սկսեց յաճախ թռչելով անտառը գնալ ու այնտեղ օրերով կորչել: Մի անգամ, երբ հնդկահաւն այդպէս կորած էր, Օդիւբօնը որսի գնաց և անտառի մէջ մի հնդկահաւ նրկատեց: Բնագէտի շունը դիրք ընդունեց նրա վրայ յարձակելու: Բայց, ի զարմանս Օդիւբօնի, թռչունը մազաչափ անգամ չը վախեցաւ, այլ վստահութեամբ սկսեց որսորդի ու նրա շան վրայ նայել, և շունն էլ, ինչպէս երևաց, ճանաչեց իր բարեկամին:

Այս անգամ թռչունն ազատուեց վտանգից:

Բայց հետեւեալ գարնանը Օդիւբօնին մի փոքրիկ կարմիր ժապաւենի կտոր բերին, որ նա մի անգամ կապել էր իր հնդկահաւի պարանոցին: Վերջը իմացեց, որ նրան սպանել էին, կարծելով թէ նա վայրի հնդկահաւ է:

34. ԳՈՐԾՈՒԿՆ ՈՒ ԱՂՈՒԵՍԸ

Քետի բարձր ափի վրայ, որը խիստ զանդամ էր իջնում գէպի ջուրը, մի գորշուկ էր զբօսնում: Յանկարծ, որտեղից որ էր, մի



աղուես վագեց նրա մօտ և սկսեց իր մարմինը նրա մարմնին քսել: Նախ քան միամիտ գորշուկը կարողացաւ սթափւել զարմանքից, ա-

դուեսը ափից իրան ցած գցեց ու լողալով ան-
ցաւ գետը:

Այդ միջոցին որսկան շների մի ամբողջ
երամ հաշելով գորշուկի վրայ ընկաւ, և, նրա-
նից աղուեսի հոտն առնելով, պզկ-պզկ արե-
ցին խեղճին: Իսկ աղուեսը, որի հետքը շներն
արդէն բոլորովին կորցրել էին, գետի մէջ լո-
ղալով շառ հեռու էր գնացել, իր սուր դունչը
շրից վեր բարձրացրած:

35. Խ Ե Լ Օ Ք Է Շ Ը

Էջին գոմումն էին պահում, իսկ գոմին
կից բանջարանոցն էր գտնուում: Գոմից գէպի
բանջարանոց տանող դուռը փակուում էր եր-
կու նիգերով և մի հատ էլ ախնով: Մէկ ան-
գամ էջի տէրը նկատեց, որ բանջարանոց տա-
նող դռան նիգերը յետ էին բաշւած, իսկ բան-
ջարանոցումն էլ սմբակների հետքեր էին երե-
ւում, որ պարզ ապացոյց էր, թէ ով կարող էր
լինել այդ յանցանքի հեղինակը: Այնուամենայ-
նիւ տէրը ոչ մի կերպ չէր կարողանում հա-
ւատար, թէ իր էջը կարող էր դուռը բանալ
ուստի հետեւեալ գիշերը նա սկսեց հսկել:

Չէնց որ տան մէջ բոլոր ճրագները հանգ-

ցւեցին, էջը մօտեցաւ դռանը, կանգնեց յետի
ոտքերի վրայ և սկսեց ատամներով մի կողմ
քաշել վերի նիգը. յետոյ նա յետ քաշեց ցա-
ծինը, բարձրացրեց ախը և մտաւ բանջարա-
նոց: Շուտով նա վերագարձաւ, ատամների մէջ
բերելով մի փունջ գազար, իսկ նրա բարձրա-
ձայն որոճը ցոյց էր տալիս, որ նա զուր ժա-
մանակ չէր կորցրել բանջարանոցում:

Տէրն իր էջի գիշերային քաջագործութիւն-
ները հարեաններից շատերին ցոյց տւեց,
նախ քան նա սկսեց բանջարանոցի դուռը աւելի
հաստատուն կերպով կողպել: Բանը նրանուամ
է, որ ինչպէս միշտ նկատուում էին, հասկացող
անասունն իր խորամանկութիւնները միշտ ա-
նում էր այն ժամանակ, երբ տան մէջ ճրագ-
ները հանգած էին լինում:

36. ԳԻՒՂԱՑԻՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Մի երեկոյ, խիստ բուր-բորան ժամանակ,
գիւղացին քաղաքից տուն էր վերագառնում:
Նա արդէն բաւական մօտեցել էր գիւղին,
երբ ճանապարհից խոտորեց և երկար ժամա-
նակ աշխատում էր գտնել: Սակայն, շատ չար-

չարեւելուց յետոյ, յոգնած վայր ընկաւ ձիւնի վրայ ու քունը տարաւ: Իսկ ռժ չը գիտէ, որ սառնամանիքի տակ քնողը սառչում է:

Բայց գիւղացու հետ էր և շունը: Սա պառկեց իր տիրոջ կուրծքի վրայ, իսկ նրա տաք մուշտակը տաքացնում էր խեղճ գիւղացուն: Կատաղի բամին նրանց վրայ ձիւնի դեգեր էր շարտում:

Միւս առաւօտը մի անցորդ նկատեց, որ ձիւնի վրայ մի ինչ որ բան է երևում, և մօտեցաւ: Շունը թռաւ տեղից, թափահարեց վրայի ձիւնը և աշխատեց, ինչպէս կարող էր, հասկացնել անցորդին, որ սա աւելի մօտենայ ցրտից սառչող իր տիրոջը: Անցորդը հասկացաւ նրան, գնաց շան յետևից և ճանաչեց իր համագիւղացուն: Այս մարդը դեռ կենդանի էր: Նրան տարան մօտակայ խրճիթը և ուշքի բերին, որից յետոյ նա պատմեց, թէ ինչ էր պատահել իր հետ:

Այդ ժամանակից ի վեր երախտագէտ գիւղացին այլ ևս չէր բաժանւում իր շնից և ոչ մի պատառ բան չէր ուտում, առանց նրա համար էլ բաժին հանելու:

37. ԵՐԿՈՒ ԱՅԾԵՐ

Անգլիայի ժայռոտ ափերից մէկի վրայ երկու այծ էին արածում: Նրանցից մէկը բարձրացաւ նեղ ժայռի ամենասուր ծայրին և սոսկալի անդունդի վրայ դուրս եկաւ: Այնտեղ փոքր ինչ մանր խոտ արածելուց յետոյ, այծը շուռ եկաւ, որ վերադառնայ, բայց ճանապարհին իր ընկերուհուն պատահեց: Այն տեղը, ուր նրանք հանդիպեցին, այնպէս նեղ էր, որ նրանք ոչ միայն չէին կարող կողք կողքի անցնել, այլ և նրանցից ամեն մէկը չէր էլ կարող շուռ գալ: Նրանք միմեանց դէմ կանգնեցին և չը գիտէին ինչ անել:

Այդ ժամանակ այծերից մէկը զգուշութեամբ չոգեց ու գետնին կպաւ: Միւսը, կարծես թէ, հասկացաւ իր բարեկամի դիտաւորութիւնը, թեթև ոստիւնով ցատկեց նրա վրայից և ապահով տեղի վրայ կանգնեց:

Մի բանի բայլ առաջ գնալով, միւս այծն էլ ժայռի անկիւնին հասաւ, ուր այլ ևս դժւար չէր շուռ գալն ու վերադառնալը: Այսպիսով վտանգից ազատւեցին երկու այծն էլ:

38. ԱԳՈԱՆՆ ՈՒ ԻՐ ՏԵՐԸ

Մէկ անգլիացի վարժեցրած մի ագռաւ ունէր, որին նա փոքր ժամանակից իր տանն էր մեծացրել: Երկար ժամանակ ապրեց ագռաւն



անգլիացու տանը, բայց մի օր նա յանկարծ անյայտացաւ:

Դրանից մէկ տարի անցնելուց յետոյ, անգլիացին մի անգամ գնացել էր դաշտը զբօսնելու: Նրանից ոչ հեռու, օդի մէջ, ագռաւների մի ամ-

բողջ երամ էր պտոյտ-պտոյտ անում: Յանկարծ այդ ագռաւներից մէկը բաժանուէց իր ընկերներից, թռաւ անգլիացու մօտ, նստեց նրա ուսին և սկսեց գուրգուրել: Դուրս եկաւ, որ դա նրա անյայտացած ագռաւն էր: Բաւական երկար ժամանակ նա պտոյտ-պտոյտ էր անում իր տիրոջ շուրջը, թէև այլ ևս թոյլ չէր տալիս իրան բռնելու: Երկար ժամանակ ագռաւը վարանում էր իր հին բարեկամից հեռանալ, բայց իր եղբայրակիցների շրջանում ռաւան, բայց իր եղբայրակիցների շրջանում ազատութեամբ ապրելու սէրը վերջապէս յաղթող հանգիստացաւ. նա թռաւ գնաց նրանց աղմկալի և ուրախ երամի յետևից: Դրանից յետոյ անգլիացին այլ ևս չը տեսաւ իր ագռաւին:

39. ԲՈՋՈՆ ՈՒ ԱՂԶԻԿԸ

Անգլիացի մի փոքրիկ աղջիկ ծաղիկներից պսակ էր հիւսում գետակի ափին, որը հոսում էր գոյնզգոյն ծաղիկներով զարդարուն մարգագետնի միջով: Նրա ձեռքի ծաղիկներից մէկը շուրջն ընկաւ. աղջիկը ձեռքը պարզեց ծաղիկը բռնելու, բայց ոտքը սահեց ու ինքն էլ ընկաւ հոսանքի մէջ: Բարեբաղդաբար, հէնց

մօտիկ տեղում արածում էր գեղեցիկ ու փոքրիկ մի բոչոյ, որն աղջկայ սիրելին էր և յաճախ շան նման խաղում էր նրա հետ:

Իր ընկերուհու ճիշդ լսելով, ձիուկը նետուեց ջրի հոսանքի մէջ, զգուշութեամբ ատամներով բռնեց նրա հագուստից և ափը դուրս հանեց: Այդ դէպքից յետոյ աղջկայ ու ձիուկի միջև եղած բարեկամութիւնը աւելի ևս սերտ դարձաւ:

40. ԾԻԾԵՌՆԱԿՆ ՈՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Մէկ անգամ կտուրի ծայրին նստած ծիծեռնակի ոտին մի թել փաթաթուեց, որի միւս ծայրն էլ ջրափողին էր կապուած:

Խեղճ թռչնիկն անասելի ոյժ էր գործ դրնում ազատելու համար: Վերջապէս, տեսնելով, որ ոչ մի յոյս չը կայ փրկելու, նա կախ ընկաւ թելից ու սկսեց դառն կերպով ծրվծրվալ: Շուտով նրա գլխին հաւաքւեցին հարիւրի չափ ուրիշ ծիծեռնակներ. երևում էր, որ բոլորն էլ մեծ ցաւակցութեամբ էին վերաբերում իրանց ընկերուհուն: Երկար ճրվճրվալուց ու ծրվծրվալուց յետոյ, ծիծեռնակներից մէկը, որը, ինչպէս երևում էր, ամենքից աւելի հաս-

կացողն էր, կարծես թէ մի բան մտածեց: Նա իր մտածածը միւսներին էլ հասկացրեց, և ահա նրանք բոլորն էլ սկսեցին իրանց ընկերոջ հնարագիտութիւնն իրագործել:

Թռչնիկներից ամեն մէկը մի առանձին դիրք գրաւեց ջրափողի վրայ և բոլորն էլ հերթով սկսեցին թելի մօտով անցնել ու պինդ կրացահարել թելը: Այդպէս շարունակւեց կէս ժամի չափ, մինչև որ թելը կտրւեց և խեղճ գերին ազատութիւն գտաւ, ի ցնծութիւն ընդհանուրի:

41. ՎԻԹԻ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Լեռնային որսորդը, իր ճանապարհորդութիւնների ժամանակ, մի վիթ նկատեց երկու ձառուկներով: Սրանք մի այնպիսի ժայռի վրայ էին բնակւում, որը հարեան լեռնից բաժանւում էր մի խոր ճեղքաձորով: Այդ հանգամանքը տեսնելով, որսորդի մէջ խիստ ցանկութիւն ծագեց փոքրիկ վիթերից մէկին կենդանի բռնել, որպէս զի տանը վարժեցնի այդ սիրուն կենդանուն: Եւ ահա նա զաղտագողի մօտեցաւ, որչափ որ հնարաւոր էր, երկու ձեռքով բռնեց ժայռից ու սկսեց խորհել, թէ ինչ կերպ

կարելի է վիթին հասնել: Բայց մայր-վիթը, որը սուր աչքերով հսկում էր չորս կողմը, նկատեց որսորդին և սկսեց սաստիկ անհանգստանալ, չիմանալով, թե ինչպէս ազատի իր ձագուկներին: Իզուր էր նա ձագուկներին կանչում իր յետևից միևս լեռան վրայ անցնել. ձագուկները այնքան փոքր էին, որ չէին կարողանում



ձեղքւածքի վրայից ցատկել: Իսկ որսորդն աւելի ու աւելի էր մօտենում. ամեն մի բուռն թանգ էր: Այդ ժամանակ յուսահատւած վիթն այսպիսի մի միջոցի դիմեց. նա սրոշեց իր մարմինը կամուրջ դարձնել ձագուկների համար. առաջի ոտները ձեղքւածքի միևս եզերքին դրեց ու կանգնեց: Իսկ ձագուկները, իսկոյն հասկա-

նալով, թէ ինչ է ցանկանում իրանց մայրը, մէկը միևսի յետևից մագլցեցին նրա մէջքի վրայ ու նրա վրայով անցան հարևան լեռը, ուր շատ հեշտութեամբ բոլորն էլ անհետացան զարմացած որսորդի աչքերից:

42. ԵՐԵՒԱՆԵՐՆ ՈՒ ԻՆՁԸ

Ամերիկայում, Օրինոկո գետի ափին, հրնդիկների գիւղից ոչ հեռու, մարգագետնի վրայ երկու փոքրիկ երեխաներ էին խաղում—մէկը տղայ, իսկ միւսն աղջիկ: Յանկարծ մօտակայ անտառից մի շատ գեղեցիկ ու լաւ կազմւած բով ինձ դուրս եկաւ և մի քանի ոստիւնով երեխաներին մօտեցաւ: Ինչպէս երևում էր, ինձը դեռ շատ մատղաշ էր և, տեսնելով, թէ ինչպէս երեխաները խոտի վրայ վազվզում ու թաւալում էին, ինքն էլ էր ուզեցել նրանց խաղին մասնակից լինել: Կատուի ձագուկի նման, նա էլ սկսեց թռչկոտալ ու գետին թաւալել երեխաների հետ. մէկ պառկում էր խոտի վրայ ու պոչն էր շարժում, մէկ էլ յանկարծ սիրուն ոստիւններ էր գործում և երեխաներից մէկի կամ միևսի յետևից վազում: Բաւական երկար ժամանակ նա այդպէս զւարճացաւ ու խաղաց,

մինչև որ պատահաբար տղի երեսը չանգոնեց: Այդ ժամանակ աղջիկը մի ձող վերցրեց ու սկսեց ինձին հեռու վանել. երբ աղջիկը փայտով քշում էր նրան, վառվռուն գազանը հեռանում էր նրանից և սկսում էր մարգագետնի վրայ պտոյտ-պտոյտներ անել, բայց նորից դարձեալ վազում, երեխաների մօտ էր գալիս:

Մի քանի հնդիկներ, պատահամբ այդտեղ գալով, չափազանց զարմացան, արիւնարբու ու գիշակեր գազանի այդ վարմունքը տեսնելով: Բայց ինձը, հասակաւոր մարդկանցը տեսնելուն պէս, մի քանի մեծ ոստիկներ արեց ու անհետացաւ խիտ անտառում:


43. ԶԱՅԼԱՄՆ ՈՒ ԻՐ ԶԱԳՈՒԿՆԵՐԸ +

Մայիտան Կոմինգը, իր որսորդական ճանապարհորդութիւնների ժամանակ հարաւային Աֆրիկայում, շայլամների մի ամբողջ երամի պատահեց. նրանցից 12-ը ձագուկներ էին: Սրանք ղեռ հաւի մեծութեան էին, իսկ մայրը ինամբով պահպանում ու պաշտպանում էր նրանց որսորդից: Նա բաւականին մօտեցաւ որսորդին և ամեն կերպ աշխատում էր նրա ուշադրութիւնն իր վրայ գրաւել: Նա քացում ու

փակում էր իր թևերը, գետին էր թաւալւում, ինչպէս որ թաւալւում են վիրաւորւածները, զանազան մասխարութիւններ էր անում, ինչ է թէ այդ ձևով ժամանակ տայ արու շայլամին, որպէս զի սա ձագուկներին հեռացնի սպանացող վտանգից:

44. ԱՇԽԱՏԱԻՈՐ ԶԻՆ ՈՒ ՄԱՆՈՒԿԸ

Մեծ ընտանիքի տէր մի աշխատաւոր մէկ ձի ունէր, որն այնպէս սովորած էր իր տիրոջ երեխաներին, որ երբ սրանք խաղում ու թաւալւում էին ձիու ոտքերի տակ, ձին փետացած կանգնում էր ու տեղից չէր շարժւում: Մէկ անգամ, երբ ձին բեռնաւորւած ծանր սայլը քաշում տանում էր նեղ ճանապարհով, երեխաներից մէկն անփոյթ կերպով խաղում էր ձի



նապարհի վրայ, բոլորովին ուշադրութիւն չը դարձնելով, որ իրան վտանգ է սպառնում: Բայց զիտէք ինչ արեց խելօք ձին: Նա զգուշութեամբ բռնեց ատամներով երեխայի հագուստից, տարաւ նրան բաւականին տեղ ու դրեց խոտի վրայ, ճանապարհի կողքին: Եւ մինչ նա մանուկի մօտով պիտի անցկացնէր սայլը, շատ կամաց էր գնում ու շարունակ յետ էր նայում, որ չը լինի թէ սայլի անիւն երեխային դիպչի:

45. ՇՈՒՆՆ ՈՒ ԱՔԱՂԱՂԸ

Տաքս ցեղին պատկանող մի շուն հիւանդ էր, և անհրաժեշտ էր նրան փակւած պահել: Նրա բանտի մուտքը փակել էին ցիցերով: Մեծ աբլորը յաճախ անցնում էր նրա մօտով ու մեծ ցաւակցութեամբ էր նայում խեղճ բանտարկեալին: Վերջապէս, աքաղաղը չը համբերեց, մի կերպ ներս մտաւ շան մօտ, և այն օրւանից նրանք մտերիմ բարեկամներ դարձան: Նրանք համարեա թէ չէին բաժանւում միմեանցից, և, ինչպէս երևում էր, շունը շատ էր տխրում, երբ աբլորը գնում էր իր սովորական կուտն ու-

տելու: Երբ շան հիւանդութիւնը սաստկացաւ, աքաղաղը կրկնապատկեց իր խնամքն ու փաղաքշանքը: Նա մէկ նստում էր շան առաջին թաթերի արանքը, մէկ թոյլ էր տալիս հիւանդին գլուխն իր վրայ դնելու, որպէս զի փափուկ ու տաք լինի: Այսպէս անցաւ մի քանի շաբաթ. բայց վերջ ի վերջոյ հիւանդութիւնն յաղթեց. շունը մեռաւ և դրանով էլ վերջացաւ այդ տարօրինակ բարեկամութիւնը: Երկար ժամանակ աքաղաղը չէր կարողանում մխիթարւել, և յաճախ տեսնում էին, թէ ինչպէս նա տխուր նըստած էր լինում ճիշտ այնտեղ, ուր պառկած էր առաջ նրա հիւանդ բարեկամը:

46. ՇՈՒՆՆ ՈՒ ՄԱՆՈՒԿԸ

Ամերիկայի պլանտատորներէից մէկի երեխան կորել էր: Մօտակայ անտառում զբօսնելու ժամանակ երեխան, յայտնի չէ թէ ուր, անյայտացաւ: Վշտացած ու վախեցած հայրը ոտքի տակ տւեց բոլոր մօտակայ անտառները. աղաղակում, կանչում էր տղին, հարց ու փորձ էր անում բոլոր պատահած մարդկանց, բայց չէր կարողանում գտնել:

Միւս օրը նրա մօտ եկաւ մի հնդիկ, որը մի ծերունի և փորձեալ որսորդ էր: Նրա հետ մի հիանալի էլ շուն կար, որն իր տիրոջ նման, ծերացել էր անտառներում որս փնտռելով: Հրնդիկը իմացաւ պլանտատորին պատահած դժբաղդութեան մասին և ասաց նրան.

— Տւէք ինձ ձեր կորած երեխայի գուլպաներն ու կօշիկները, գուցէ ես գտնեմ երեխային:

Յետոյ նա իր շանը տւեց հոտոտելու երեխայի ոտնամանները, իսկ խելօք կենդանին իսկոյն հասկացաւ, թէ ինչ են ուզում իրանից: Շունը դուրս թռաւ բակից ու սկսեց ագահութեամբ գետինը հոտոտել: Եւ նա շուտով գտաւ երեխայի հետքը: Գլուխը քարշ արած, դնչի ծայրը գետնից չը պոկելով, նա վազեց անտառը, իսկ նրա յետևից արագ քայլերով գնաց և հնդիկը:

Անտառում հնդիկն աչքից կորցրեց շանը: Երկար ժամանակ չէր վերադառնում շունը: Վերջապէս լսեց նրա ուրախ հաջոցը, և նա վազելով տիրոջը մօտեցաւ ու սկսեց թռչկոտալ նրա շուրջը: Նրա աչքերը փայլում էին, յոգնածութիւնից շատ դժւարութեամբ էր շունչ առնում և կանչում էր տիրոջն իրան հետևելու:

Բաւական երկար գնաց հնդիկը շան յետևից, և ահա անտառի մի շատ խիտ տեղում շունը կանգ առաւ: Այստեղ պառկած էր ու-

ժասպառ եղած տղան, որը քաղցից, յոգնածութիւնից ու վախից քիչ էր մնացել, որ մեռնէր:


47. ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՃՆՃՂՈՒԿԸ

Ամենքին յայտնի է, որ ծիծեռնակները ձմեռան մօտ թռչում ու հեռանում են մեզնից դէպի տաք երկիրներ, ուր կարող են միջատներ գտնել, որոնցով նրանք կերակրւում են: Գարնանը նրանք նորից վերադառնում են ճիշտ այնտեղ, ուր նրանց անցեալ տարւան բոյնն էր եղել: Մէկ անգամ երկու ծիծեռնակներ, վերադառնալով գարնանն այն բաղաքը և այն կտուրի տակ, ուր իրանց բոյնն էր գտնւում, կամեցան բոյնը կարկատել և առաջւան պէս նրա մէջ բնակւել: Բայց այդ բոյնի մէջ մի ճնճղուկ էր նստած, որը ծիծեռնակների բացակայութեան ժամանակ գրաւել էր նրանց տեղը և բարկութեամբ կտցահարում էր բոյնի իսկական տէրերին, հէնց որ սրանք փորձում էին այնտեղ մտնել:

Շատ երկար թռչկոտացին խեղճ թռչնիկներն իրանց բոյնի շուրջը, կարծես յուսալով, թէ ճնճղուկը վերջապէս կը զգայ, որ անար-

դար կերպով է ինքն ուրիշի բնակարանը գրա-
ւել, բայց ճնճղուկը բոլորովին ոչինչ չէր ու-
զում հասկանալ:

Այդ ժամանակ ծիծեռնակները կանչեցին
իրանց ընկերներին, նրանցից ամեն մէկը կը-
տուցով մի քիչ ցելս բերեց և նրանք այդ ցե-



խով սւաղեցին այն բոյնի մուտքը, որի մէջ
ճնճղուկն էր նստած: Գող աւազակը շատ զըղ-
ջաց, որ չը զիջեց բոյնը իսկական տէրերին:
Եւ իր կատարած յանցանքի համար նա պատ-
ժեց նրանով, որ քաղցածութիւնից մեռաւ:

48. ԵՐԱՆՏԱԳԼՏ ԿԱՏՈՒՆ



էկ տան մէջ մի շուն և մի
կատու կային: Նրանք այն-
չափ բարեկամ էին իրա-
րու հետ, որ մէկ ամա-
նից էին ուտում ու մէկ
կարպետի վրայ բնում:
Փիսիկը մեծ ընտանիքի տէր էր,
իսկ Տրեգորը ամեն օր գնում էր
նրա ձագուկներին տեսութեան, որ վերնա-
յարկում կտուրի տակ էին պառկած:

Մի շատ շոգ օր խիստ ամպոռոտ բարձրա-
ցաւ: Տրեգորը հիւրասենեակումն էր, իսկ կա-
տուն վերնայարկում ձագուկներին էր կերակ-
րում: Շունը նոր էր ձգւել փափուկ խալիչայի
վրայ և իրան այնպէս լաւ էր զգում, որ իսկի
չէր էլ կամենում տեղիցը շարժւել: Այդ միջոցին
յանկարծ կատուն ներս վազեց, ողբաձայն մը-
լաւելով ու իր չորս կողմը նայելով:

Նա սկսեց Տրեգորի շուրջը պտոյտ-պտոյտ
անել, երեսը նրա մարմնին քսել, թաթովը շո-

յել, և ապա վագեց զէպի զուռը: Այստեղ նա
կանգնեց և, աղերսալի հայեացքով Տրեգորին նա-
յելով, շարունակում էր մլաւել, կարծես թէ
խնդրում էր նրանից՝ իր յետեից գնալ: Բայց
Տրեգորը տեղից չէր շարժւում: Նա ինքն էլ
ամպի գոռոցից վախենում էր և շատ ուրախ էր,
որ տաքուկ տեղ էր գտել իր համար: Կատուն
վերադարձաւ ու նորից սկսեց փաղաքշել շանը
և իր յետեից կանչել: Բայց ծոյլ շունն ոչ մի
ուշադրութիւն չէր դարձնում նրա աղաչանք-
ների ու փաղաքշանքների վրայ, թէև նրա գէմքի
արտայայտութիւնից երևում էր, որ նա շատ լաւ
էր հասկանում, թէ իրանից ինչ են ուզում:
Խեղճ փիսոն, զուր տեղն այս ու այն կողմ շուռ
գալով հիւրասենեակում, տխուր դուրս եկաւ
այնտեղից, և շուտով նրա յուսահատական մը-
լաւոցը լաւեց: Մի տիկին, որն այդ տանը հիւր
էր և կենդանիների մեծ սիրահար, չը կարո-
ղացաւ այլ ևս համբերել ու դուրս գնաց տես-
նելու, թէ ինչ է պատահել կառուին: Նա խեղճ
կենդանուն գտաւ սենեակներից մէկում, մեծ
պահարանի մօտ կանգնած: Ներս մտնող տիկ-
նոջը տեսնելով, կատուն ուրախացաւ, սկսեց
նրա ոտներին քսել և մտաւ պահարանի տա-
կը: Բանից դուրս եկաւ, որ նա իր ձագուկնե-
րից մէկին փախցրել էր վերնայարկից, ուր
ամպի խիստ գոռոցները սաստիկ վախեցնում


էին նրանց, և բերել ու պահարանի տակն էր
պահել: Նա կամենում էր միւս ձագուկներին
էլ այստեղ բերել, բայց չէր իմանում, թէ ում
յանձնի այս բերածին, որպէս զի մի որ և է
փորձանք չը պատահի նրա հետ, մինչև որ ինքը
կը գնայ վերնայարկն ու միւս ձագուկներին էլ
կը բերի: Ահա թէ ինչու համար էր նա Տրեգո-
րին կանչում: Այժմ կատուն, տեսնելով որ իր
ձագուկը կարող է ապահով լինել բարի տիկ-
նոջ մօտ, ինքը վագեց զէպի վերնայարկը: Տի-
կինը վերցրեց ձագուկին ու ինքն էլ գնաց վեր-
նայարկը, հաւաքեց միւս ձագուկներին էլ և,
բոլորին մէկ զամբիւղի մէջ տեղաւորելով, ցած
բերեց ու դրեց սենեակի մի մութ անկիւնում:

Միւս առաւօտը, երբ այդ տիկինն իր սե-
նեակի դուռը բացեց, տեսաւ փիսոյին դռան
առջև սպասելիս: Այդ ամբողջ օրը կատուն
չէր հեռանում իր բարեկամից, չիմանալով, թէ
ինչպէս արտայայտի իր շնորհակալութիւնը:

49. ՆԱՊԱՍՏԱԿՆ ՈՒ ԲԱՐԱԿ ՇՆԵՐԸ

Նապաստակը փախչում էր իր ամբողջ
թափովը, իսկ նրա յետեից վագում էին մի
խումբ բարակներ: Ճանապարհին նապաստակը

մի ցանկապատ պարտիզի պատահեց և ճարպիկութեամբ սլըւեց ցանկապատի տակովը: Շնեւրը, չը կարողանալով նոյնպէս ցանկապատի տակովն անցնել, ստիպւած էին նրա վրայից



ցատկել: Այդ հանգամանքը նկատելով, նապաստակը կռահեց, որ կարելի է դարձեալ մի քանի անգամ ստիպել շներին այդպէս ցատկելու: Նա սկսեց անվերջ կերպով ցանկապատի տակովը մտնել ու դուրս գալ, մինչև որ շները բոլորո-

վին ոյժից ընկան, յետ ու առաջ ցատկոտելով: Այդ ժամանակ միայն նապաստակը իր ամբողջ թափովը դաշտ գցեց իրան ու անհետացաւ:

50. ՀԱՃԻ-ՍՕՆԱ



Հաճի-Սօնան մի սև ու սիրուն կով էր, փայլուն բարակ մազերով, նուրբ կաշիով: Նա այնքան կերած-խմած էր, որ փորը տակառի պէս կոլուրել էր: Եօթը հորթի մայր էր արդէն և օրէցօր սպասում էինք, որ ութերորդ հորթը ծնի:

Յունիս ամսին մի երեկոյ, երբ նախիրը արօտից յետ եկաւ՝ նկատեցինք որ Հաճի-Սօնան չէ եկել: «Երեկ դեռ տակառ-փորը չէ լցւել, մտածեցինք մենք. գիշերս կը վերադառնայ, սովոր կով է, զոր պիտի գնայ, գայլերից ու գողերից էլ հօ երկիւղ չը կայ»: Բայց առաւօտն էլ տեսանք, որ Հաճի-Սօնան դարձեալ

չէ եկել: Կասկածն ընկաւ սրտերս. այսքան տարի Հաճի-Սօնան այսպէս բան արած չէր. ո՛ւր մնաց, ի՞նչ եղաւ: Մի քանի հոգի ծառաներ և երեխաներ ընկան շրջակայ անտառները՝ Հաճի-Սօնային փնտռելու: Մի քանի ժամ թափառեցին և յետ դարձան ձեռնունայն. Հաճի-Սօնան չը կար:—Մի փոքր յոյս դեռ մնում էր, թէ գուցէ Հաճի-Սօնան սարում խառնւել է նախրին և երեկոյին նախրի հետ տուն կը գայ: Երեկոյին այս յոյսն էլ դուր անցաւ: Միւս առաւօտ նախրապանները խորհուրդ արին, որ գընան մերձակայ գիւղերի նախիրների մէջ պըտըտին. գուցէ Հաճի-Սօնան նրանց հետ լինի խառնւած: Բայց իրանք էլ շատ յոյս չունէին. Հաճի-Սօնան այնքան սովոր կով էր, որ այգպիսի բան երբէք չէր անի:

Բոլորս սիրում էինք Հաճի-Սօնային և տըխրել էինք, համարելով նրան կորած:

Կէսօրից քիչ անց, երբ տանից դուրս, կանաչի վրայ զբաղւած էինք՝ յանկարծ երեխաներն ազադակ բարձրացրին. «Հաճի-Սօնան, Հաճի-Սօնան եկաւ»:—Յիրաւի անտառի կողմից, ճանապարհով ծանր ու մեծ գալիս էր Հաճի-Սօնան. Բոլորս գիմեցինք դէպի նա. Կովը եկաւ և ախոռի դռան առաջ կանգնեց:

Հաճի-Սօնան, ինչպէս նկատեցինք, ծնել էր. բայց առանց հորթի էր: «Գոնէ ինքը գտնւեց,

գլուխը քարը հորթը», մխիթարում էինք մենք մեզ, ուրախանալով Հաճի-Սօնայի վերադառնալուն: Մանաւանդ ուրախանում էր նրա կըթող կինը, Ղազալը, որ փաթաթւում էր Հաճի-Սօնային ու փայփայում էր:

— Ղազալ, ասացի. տես կուրծն ինչպէս ուռել, քար է կտրել. կթոցը բեր կթիր. նա շատ նեղւում է և եկել է կթւելու:

Ղազալը կթոցը բերեց և առանց կովը կապելու՝ տակը պպղեց ու կթեց—մի լիբը կթոց դալ: Ինչպէս էր տեղաւորել այդքան դալը իր կրծում:

Հաճի-Սօնան հէնց որ հանգստացաւ՝ իսկոյն գլուխը շուռ տւեց և ուղղեց եկած ճանապարհով յետ, դէպի անտառ:

—Մկրտիչ, ասացի ծառաներից մէկին. յետևիցը գնա. նա հորթի մօտ է գնում:

Հաճի-Սօնան գնալիս մէկ անգամ յետ մըտիկ տւեց, տեսաւ որ յետևիցը գնացող կայ, և թեթեւ-թեթեւ շարունակեց գնալ:

Մենք տուն մտանք ճաշելու:

Կէս ժամ չանցած երեխայքը դարձեալ ծայն բարձրացրին. «Մկրտիչը գալիս է, ձեռքին բան ունի գրկած—հորթն է. Հաճի-Սօնան էլ յետևիցը»:

Այդպէս էլ էր: Մկրտիչը ցած դրեց սիրու-

նիկ հորթին և Հաճի-Սօնան, երջանիկ մօր
փափաքով, սկսեց նրան լիզել:

Մկրտիչը պատմեց: Հաճի-Սօնայի յետևիցը
գնացի, մտանք անտառը: Գնաց գնաց և յան-
կարծ կանգնեց: Մօտեցայ, տեսնեմ հորթն է:
Խեղճը երկու բարակ ծառի մէջ էր խրւել,
սեղմւել: Հէր կարողանում դուրս գալ: Ինչպէս
երևում է, այս երկու օրս շատ է չարչարւել
ծառերի մէջ սեղմւած:

Մենք զարմացել էինք, ինչպէս Հաճի-Սօ-
նան հնարը գտաւ թէ իրան նեղող դալից թե-
թեանալու և թէ հորթիկին ազատելու. ինչպէս
հասկացաւ, որ դրանց համար պէտք է դիմէ
իրան խնամող մարդկանց օգնութեանը: Իսկ
Հաճի-Սօնան յաղթական կերպով նայում էր
մեզ. կարծես ասելիս լինէր. տեսա՞ք, ես չէի
սխալւել, որ մարդիկ իմ դարդերս կը հասկա-
նան և ինձ կօգնեն:



51. Ծ Ա Ծ Ա Ն Ը



արմանալի խելքի տէր կա-
տու էր Ծածանը: Համարեա
թէ իր ծնւած օրից նա իմ
աչքի առաջ էր մեծացել, և
ես շարունակ դիտում ու յա-
ճախ զարմանում էի նրա
խելքի ու հասկացողութեան վրայ: Ոչ միայն
շատ խելօք, այլ և չափազանց սիրուն էր Ծա-
ծանը. նա այնչափ սպիտակ ու փափլիկ էր,
որ կարծես թէ բամբակ լինէր: Եւ հէնց այդ
պատճառով էլ մենք բոլորս նրան սիրում
էինք ու ձեռներիս վրայ մեծացնում:

Ամենից աւելի ես էի նրանով զբաղւում և
հէնց այդ պատճառով էլ ամենից շատ նա ինձ
էր ընտելացել ու այնքան վարժւել, որ իմ բա-
ցակայութեան ժամանակ նա, կարծես թէ,

տխրում էր: Նա զարմանալի կերպով սովորել էր ու գիտեր իմ՝ տուն վերադառնալու ժամերը, և այդ միջոցին նա դուրս էր գալիս փողոց ու սպասում իմ վերադարձին: Հեռից ինձ նկատելուն պէս, վազում էր ընդ առաջ, մագլցում, բարձրանում էր ուսիս, և այդպէս, մոմռալով, տուն էի բերում նրան:

Գիշերներն էլ նա ինձ հետ էր պառկում: հէնց որ պառկում ու ճրագը հանգցնում էի, մէկ էլ տեսար, Ծածանը իսկոյն թողեց իր սովորակական խաղը, զգուշութեամբ մօտեցաւ ինձ և սկսեց խնդրել, որ ես նրան վերմակիս տակն առնեմ:

Այո, նա խնդրել գիտէր, և ես ընտելացել ու հասկանում էի նրա խնդրելու բոլոր գանազան եղանակներն ու ձայնի ելեէջները: Զուր ուզելիս, օրինակի համար, նա տարբեր՝ շատ մեղմ, փափուկ ձայն էր հանում միայն, մի այնպիսի ձայն, որ չէ կարելի մլաւոց անւանել. քաղցած ժամանակ բոլորովին մի այլ ձայնով էր խնդրում, իսկ երբ կամենում էր քնելու գալ, նա միմիայն մոմռում էր և երեսուս ու ձեռներս լիզում:

Բարձր ձայնով Ծածանը մլաւում էր այն ժամանակ միայն, երբ կամենում էր խնդրել, որ դուռը բանանք ու թողնենք դուրս գնայ, կամ թէ, երբ պատահմամբ փակւած էր մնում

մի այլ սենեակում և կամենում էր մեզ մօտ գալ: Երբեմն էլ պատահում էր, որ գիշեր ժամանակ Ծածանը դուրսն էր մնում, և մենք մոռանում էինք ներս թողնել նրան: Այդ պարագայում նա մօտենում էր մեր ննջարանի պատուհանին և սկսում էր թաթովը խփել ապակիներին, մինչև որ մենք կը զարթէինք ու ներս կը թողնէինք:

Շատ ծիծաղելի էր Ծածանը, երբ առաւօտները, մի լաւ նախաճաշելուց յետոյ, կուշտ փորով բարձրանում, նստում էր պատուհանի վրայ, լեզուով կամ թաթովը մաքրում ապակու վրայից թանձր գոլորշին և սկսում էր ամբողջ ժամերով դիտել, թէ ինչ է կատարւում բակումը:

Ինչպէս երևում էր, Ծածանը նաև շատ նուրբ զգայարանքների տէր էր: Չմեռ ժամանակ, երբ նրան ամանով ջուր էինք տալիս խրմելու, նա իսկոյն չէր խմում, այլ նախ թաթն էր կոխում ջրի մէջ, փորձելու համար, թէ արդեօք շատ սառն չէ: Եթէ շատ սառն էր լինում ջուրը, նա սպասում էր, կրկին անգամ փորձում էր թաթով և յետոյ միայն լկում: Նոյն ձևով էր նա վարւում և տաք կերակուրի հետ:

Ինչպէս բոլորդ էլ գիտէք, սովորաբար կատուներին զող են անւանում: Բայց զսրմանալի բան է, մեր Ծածանը այդ արատից բոլորովին զուրկ էր երևում: Գոնէ, բանիցս անգամ պատահել էր, որ գիշերներն ուշ վերադառնալիս, տեսնում էի սեղանի վրայ ինձ համար ընթրիք պատրաստւած, ամեն ինչ բաց դրւած, իսկ Ծածանն էլ նոյն սենեակում ոչ մի բանի չէր դիպել ու բաղցած ինձ էր սպասում, որ իրան բաժին տամ:

Այդ բոլոր լաւ յատկութիւններով հանդերձ, Ծածանը և վատ յատկութիւններ էլ ունէր. նա, վերին աստիճանի նախանձոտ կատու էր: Նա տանել չէր կարող, երբ ես սկսում էի մեր փոքրիկ շնիկին փայփայել: Այդ ժամանակ նա կամ ցատկում էր ծնկներէս վրայ ու ամեն կերպ աշխատում էր խանգարել ինձ, և կամ, խռովկան վատ երեխայի նման, խռովում փախչում էր տնից և ամբողջ օրը չէր վերադառնում:

Մէկ անգամ պատահեց, որ մեզ համար Երևանից մի փոչիկ Վանայ կատուի ձագ նւէր բերին: Ծածանը նախ փորձեց սաստիկ թըշնամաբար վերաբերւել այդ փոքրիկ փխիկին, բայց յետոյ, տեսնելով, որ մենք նրան պաշտպանում ենք, նա խռովեց ու գնաց տնից: Ամբողջ օրերով նա այլ ևս ներս չէր գալիս:

որչափ կանչում, կերակուր էինք առաջարկում, ոչինչ չէր օգնում. պատուհանից կամ դռնից հէնց որ նկատում էր կատուի ձագուկին, իսկոյն ֆըշտացնում ու փախչում էր:

Կատուի ձագուկը, սակայն, երկար չապրեց. ինչպէս երևում է, Թիֆլիսի օդը նրա վրայ չեկաւ. նա շուտով հիւանդացաւ և 8—10 օրից յետոյ մեռաւ: Ծածանը իսկոյն նկատեց այդ բանը: Կատուի ձագուկի դիակը դեռ նոր էինք դուրս նետել, երբ նա մոմռալով ներս ընկաւ ու սկսեց կարօտալի կերպով մեզ քսքսուել ու փաղաքշել. կարծես թէ այդպիսով կամենում էր մեր վիշտը փարատել ու ասել.

«Ես սաղ լինեմ ձեզ համար, շատ էլ դարդ մի արէք»:

Մի և նոյն ժամանակ, ինչպէս երևում էր, Ծածանը սաստիկ ուրախացել էր փոքրիկ փիսոյի մահւան պատճառով, որովհետև 2—3 օր նա լաւ տրամադրութեան մէջ էր և շարունակ խաղում էր սենեակներում ու այլ ևս տնից դուրս չէր գնում: Ծածանի անգութ բնաւորութեանը ես ծանօթ էի դեռ ևս նրա պատանեկութեան ժամանակահանդէս:

Երբ Ծածանը բաւականին մեծացաւ, նրա մայրը՝ Սաշան, այլ ևս թոյլ չը տուէր նրան ծիծուտելու և, ինչպէս սովորաբար անում են բոլոր կատուներն իրանց մեծացած ձագուկներին

հետ, խիստ թշնամաբար էր վարւում նրա հետ ու չէր թողնում իրան մօտենալու: Այդ թշնամանքը սաստկացաւ նամանաւանդ այն ժամանակ, երբ Սաշան պատրաստւում էր նորից ձագուկներ բերելու և մայր դռնալու:

Հասաւ վերջապէս Սաշայի ծնելու օրը, և, ով գարմանք, մեր խորամանկ Ծածանը իր մօր համար դայեակի դեր կատարեց, նա սկսեց իր մօր հետ միասին, նոր ծնւած ձագուկներին լիզել ու մաքրել: Մայրը, Ծածանի այդ հոգատարութիւնը տեսնելով, նորից սիրեց իր մեծ աղջկանը և սկսեց նրան էլ նոյնպէս լիզել ու փայփայել, ինչպէս որ նա անում էր իր նորածին ձագուկներին: Այդ հանդամանքից սիրտ առած, Ծածանը սկսեց նորից իր մօր ծիծր ծծել: Գիտակցաբար թէ անգիտակցաբար մայրը թոյլ էր տալիս այդ բանը. իսկ անգուց ծածանը օգտւում ու օգտւում էր նպաստաւոր առիթից:

Մենք շատ էինք աշխատում այդ բանը արգելել, որովհետև գիտէինք, որ Սաշայի կաթը չէ կարող բաւականանալ թէ 4 փոքրիկ ձագուկներին և թէ անկուշտ Ծածանին: Բայց ինչ էլ անում էինք, անկարող էինք լինում արգելել. խորամանկ Ծածանը միշտ ժամանակ էր գտնում մօր ծծերը դատարկելու: Ինչ որ մենք ենթադրում էինք, հէնց այդպէս էլ եղաւ. փոք-

րիկ ձագուկները, իրանց համար բաւականաչափ կաթ չը գտնելով մօր ծծերում, շատ կարճ ապրեցին: Իսկ նրանց մահից յետոյ, Ծածանը դեռ երկար ժամանակ լի ու լի օգտւում էր իր մօր կաթից:

52. ԱՐՋՆ ՈՒ ՈՐՍՈՐԴԸ



իրենեան լեռներում ապրում էր մի որսորդ, որ պարապում էր արջեր բռնելով: Դրա համար նա փոսեր էր փորում, ծածկում էր փոսերը ծառի ճիւղերով և՛ արջերին հեշտ խաբելու համար՝ ճիւղերի վրայ հող էր ածում: Մի օր որսորդն անզգուշութեամբ ինքն ընկաւ իր փորած փոսերից մէկի մէջ և որբան աշխատեց՝ չը կարողացաւ դուրս գալ այնտեղից: Անցաւ մի քիչ ժամանակ և ահա յանկարծ նոյն փոսի մէջ ընկաւ մի արջ: Որսորդի զարհուրանքին չափ չը կար: Նա որոշեց գնդակահար անել կենդանուն,

բայց արժը դիտում էր նրան ուշադրութեամբ և երբ նկատեց, որ որսորդը նշան է բռնում մի այնպիսի անաւոր գոռոց արձակեց, որ խեղճ որսորդի ձեռները թուլացան: Մի քանի րոպէ երկուսն էլ, մարդն ու գազանը, անթարթ դիտում էին իրար և սպասում, թէ ով ինչ կանէ: Վերջապէս որսորդը՝ կարծելով որ թշնամու կասկածը փարատւեց, նորից նշան բռնեց: Բայց նորից արժի գոռոցն և զարհուրելի կերպարանքն այնպէս վախեցրին նրան, որ նա մինչև անգամ ձեռքից վայր ձգեց հրացանը: Անցաւ մի քանի ժամ: Որսորդից ոչ պակաս՝ արջն ևս ցանկանում էր աղատուել փոսից. վերջապէս նա, կարծես, մի հնար մտածեց—ծառացաւ, կանգնեց յետին ոտների վրայ, իսկ առաջին ոտների թաթերը դէմ տուեց պատին, այնպէս որ նրա մէջքը մի տեսակ սանդուղք դարձաւ: Այս բանը նա կրկնեց մի քանի անգամ և ամեն անգամ նայում էր որսորդին ու կարծես հրաւիրում օգուտ քաղել փոսից ազատուելու այս միջոցից:

Որսորդը, վերջապէս, սիրտ առաւ և բարձրացաւ կանգնեց արժի մէջքին: Հանգիստ, առանց ձայն հանելու կամ տեղից շարժւելու՝ արժը թոյլ տուեց, որ որսորդը դուրս գայ փոսից: Ազատուելով վտանգից՝ որսորդն սկսեց մտածել, թէ ինչպէս անէ, որ նոյն վտանգից ազա-

տէ և իր բախտակից ընկերին: Նա մոռացաւ, որ ինքը որսորդ է և թակարդն ընկած որսին կարող է անել ինչ որ կամենայ. նա զգում էր մի բան միայն—երախտագիտութիւն: Որսորդը վազեց մօտակայ գիւղը, բերեց մի երկար սանդուղք, իջեցրեց փոսի մէջ ու ինքն սկսեց արագ-արագ փախչել: Հետևեալ օրը, երբ նա եկաւ նոյն տեղը, տեսաւ, որ փոսը դատարկ է. արժը դուրս էր եկել փոսից ու ազատուել վտանգից: Այս դէպքից յետոյ որսորդն այլ ևս չէր կարողանում արջ սպանել. նա թողեց որսորդութիւնն և սկսեց պարապել ուրիշ աշխատանքով:

53. ԶԻՆԻՈՐՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Աւելի քան յիսուն տարի առաջ, Խրիմի զարհուրելի պատերազմի ժամանակ, մի ջահէլ գինւոր ստիպւած էր հեռանալ իր հայրենի դիւղից: Նա հրաժեշտ տուեց իր ազգական-բարեկամներին ու ճանապարհ ընկաւ հասնելու իր զօրագնդին, սակայն շուտով նկատեց, որ իր սիրելի փիսօն վաղում է յետևից, շարունակ մոմոում ու փաղաքշանքով քսւում է ոտներին: Զինւորը փորձեց վռնել կատուին, բայց

նա ամենևին չէր ուզում հեռանալ: Վերջ ի վերջոյ զինւորը ստիպւած էր վերցնել կատուին ու նստեցնել մէջքին կապած զինւորական պայուսակի վրայ: Նա այդ բանն արեց մասամբ իբրեւ զւարճութիւն, մասամբ էլ նրա համար, որ սիրում էր փոքրիկ բաղցրաբարոյ կենդանուն և ցաւում էր նրա վրայ:

Անցաւ երկար ժամանակ. զինւորը հասաւ իր զօրագնդին, բայց կատուն չէր հեռանում նրանից և պատերազմական տեղափոխութիւնների ժամանակ,—ցերեկը նա նստած էր լինում զինւորի մէջքին, պայուսակի վրայ, իսկ գիշերը՝ կծկւած քնում էր իր տիրոջ հետ: Օրերը գալիս ու գնում էին իրար յետևից, փոքրիկ փիսօն մեծացաւ ու դարձաւ գեղեցիկ, շնորհալի կատու:

Վերջապէս վրայ հասաւ մի օր, երբ պէտք է տեղի ունենար մեծ ճակատամարտ: Զինւորը չը վստահացաւ հետը տանել իր սիրելի կատուին և յանձնեց նրան հիւանդ ընկերներից մէկի խնամքին. սակայն զինւորը չէր անցել նոյն իսկ մի մղոն, երբ կատուն, հասնելով նրան, սկսեց վազել յետևից, ցաւագին ձայնով մլաւել ու պահանջել, որ ձեռքն առնի: Զինւորը կռացաւ, վերցրեց կենդանուն, իսկ նա մի ակնթարթում թռաւ ու նստեց իր սովորական տեղը: Կռիւր տաքացաւ. ծուխը մարդու աչք

էր կուրացնում. գնդակներն ու ռումբերը սուլելով թռչում էին այս ու այն կողմ. երիտասարդ զինւորը մի բանի անգամ վէրք ստացաւ և երկու անգամ վայր ընկաւ, բայց կատուն իր սուր ճանկերով բռնել էր պայուսակից ու չէր շարժւում տեղից: Վերջապէս զինւորը ծանր վէրք ստացաւ և արիւնաշաղախ վայր ընկաւ գետին:

Ինչ էք կարծում, ինչ արաւ կատուն: Փոխանակ վայր թռչելու և իր արագավազ ոտներով փախչելու կռիւ դաշտից՝ նա վայր իջաւ, որոնեց գտաւ զինւորի մարմնի վրայ այն տեղը, որից արիւն էր հոսում, և սկսեց լիզել վէրքը: Քիչ ժամանակից յետոյ մօտեցաւ զինւորական բժիշկն և խեղճ ուշաթափ երիտասարդին տեղափոխել տւեց պատերազմական հիւանդանոցը:

Երբ զինւորն ուշքի եկաւ ու բացեց աչքերը՝ առաջին հարցն այն էր, թէ՛ «կը մնամ արդեօք կենդանի»:

—Այո, բարեկամ,—պատասխանեց բժիշկը,—միայն շնորհիւ քո կատուի: Եթէ նա այնքան խելացի չը լինէր ու չը լիզէր քո վէրքը, դու կը մեռնէիր արնաքամ լինելուց:

Այս բացառիկ դէպքի պատճառով կատուին թոյլ տւին մնալու մշտապէս իր տիրոջ մօտ, քանի նա պառկած էր հիւանդանոցում: Հիւան-

դը տալիս էր կատուին իր բաժին կերակրի
ամենալաւ կտորները: Երիտասարդ զինւորի
ազատման պատմութիւնը շուտով յայտնի դար-
ձաւ ամբողջ զօրագնդին. փոքրիկ կենդանու-
իսելքն ու անձնւիրութիւնը գովում էին ամեն-
քը և սիրում ու փաղաքշում էին նրան:



Յ Ա Ն Կ

Էջ

1. Զրասոյգն ու Բուլղոգը	5
2. Կատուն ու դեղձանիկը	8
3. Կռիւն ու չար տղան	9
4. Խոսող թութակը	10
5. Շունը և դրամը	13
6. Կատուն և կաթի սերը	15
7. Արջն ու երեսան	17
8. Հիւսիսային արջն ու իր ձագուկները	19
9. Բրինձի գողերը	20
10. Կատուն և շան ձագուկները	23
11. Կատուն ու զանգակը	26
12. Հաւատարիմ Բուլղոգը	27
13. Շունն ու ձին	29
14. Աշխատող ձիերն ու սառոյցը	30
15. Մեծահոգի առիւծը	32
16. Չին և ջրհան մեքենան	33
17. Հաւատարիմ բարեկամը	34
18. Շներն ու մկները	35
19. Երախտագէտ պումա	38
20. Շունն ու աղջիկը	41
21. Վայրի այծը	42
22. Աղուհան ու բաղերը	43
23. Խելօք փիղը	44
24. Ծանապարհորդ ոչխարը	46
25. Կապիկներն ու սպանիացին	47
26. Գթառատ փիղը	48
27. Խեղդւելուց ազատւած թութակը	49
28. Հովւի շունն ու երեսան	

29. Վազրն ու գոմէշները	52
30. Կոյր մուկը	53
31. Վարժեցրած ծովահորթը	54
32. Աւագակի ձին	56
33. Շունն ու հնդկահաւը	58
34. Գորշուկն ու աղուեսը	59
35. Խելօք էշը	60
36. Գիւղացին ու շունը	61
37. Երկու այծեր	63
38. Ագռաւն ու իր տէրը	64
39. Բոչոնն ու աղջիկը	65
40. Ծիծեռնակն ու իր ընկերները	66
41. Վիթի հնարագիտութիւնը	67
42. Երեխաներն ու ինձը	69
43. Զայլամն ու իր ձագուկները	70
44. Աշխատաւոր ձին ու մանուկը	71
45. Շունն ու աքաղաղը	72
46. Շունն ու մանուկը	73
47. Ծիծեռնակներն ու ճնճղուկը	75
48. Երախտագէտ կատուն	77
49. Նապաստակն ու բարակ շները	79
✓ 50. «Հաճի-Սօնա»	81
✓ 51. Ծածանը	85
52. Արջն ու որսորդը	91
53. Զինուորն ու կատուն	93

ՀՀ Ազգային գրադարան



NL0376051

276